



ՅԵՅԵՐ

Վ. Կ. Պ.

ՊԵՐՃ ՊՐՈՇԵԱՆՑԻ

(Հարունակութիւն 1)

ԺԱԶ.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Օ. գիւղացիք բոլորը ջուր մաղրեցան. ամենքի բերանն էլ բաց մաց, երբ հրամանը բարձրածայն աղաղակեց. Օ. գիւղի հասարակութեան տանուտէր հաստատուած է կանդիդատ Խուզավէրդի Դուքանէրուածովը, իսկ սուղիէք՝ Մարտիրոս Դարբինովը, Սարիբէդ Փոշիմանովը, Դաւիթ Կաշեպողովը; Խոկ Արտեմ Գոմշակերոսին քննութեան երթարկուած լինելու պատճառաւ՝ մերժուում է:

Արտեմ Աէրգէյիչի անյաջնողութեան մանրամասնութիւններն իմանալու համար՝ մենք հետևինք Բալասան աղային:

Տանուտէրի ընտրութիւնից յետոյ մի շաբաթ կայաւ Մելնիկովն Օ. գիւղումը և այս շաբթումը նա մեծ գործ կատարեց:

Նորա հրաւիրանօքը միւս օրն իսկ եկաւ գիւղը Հաշտարար դատաւորն իւր պրիստաւով: Նոքա իջան Վաղիմիր Նեստորիչի մօտ: Երրորդ օրը հրապարակական աճրդախօսութիւն եղաւ. մի քանի մուրհակատէրերի շարժական և անշարժ կայքերը սակարկութեան դրուեցին:

Գիւղականներից ոչ ոք մօտ չեկաւ բացի Խուզովից և մեզ ծա-

1) Տե՛ս «Մուգաց-է 1, 2 և 3 համարները»:

նօթ դատաւորներից, որոց հաստատութիւնը զեռ չէր եկել այս ժամանակ։ Սոքա էլ շուտ յետ քաշուեցան աճրդից, իւրեանց ասելով՝ ուժերիցը վեր էր։

—Ի՞նչ արած, ստիպուած եմ ես աւելացնելու, խղճաց բարեխիղ Բալասան աղէն, թէպէտ ինձ վնաս է, բայց լաւ է ինձ վնասուել, քան խեղճերի ապրանքը կիսագնի կորչի։

Նատ գթոտ մարդ է եղել Մելնիկովը, ամեն մի վաճառի հանուած կալուածքի նշանակեալ զնի վերաց հինգ, տասը մանէթ աւելի էր տալիս և իւր վերաց թողնուամ անուրդը։

—Ի՞նչպէս անեմ, եղբա՛յր, բացատրում էր նա Հաշտարար դատաւորին, բոլորեքեան իմ աղդ ու ընտանին, իմ համագիւղացիքն, են, ես ի՞նչպէս թոյլ տամ խեղճերի կայքը կիսագնի ի կորուատ մատնուի. իմ աղզի զաւակներն են, ամենքիս սուրբ պարտքն է ազգասէր լինել։

—Անշարժ կալուածքները չեմ կարող գնահատել, կամ գինը մերձաւորապէս ճիշդ որոշել, որով և ձեր բարեսրտութեան աստիճանը, նշանակում է, չեմ կարող չափել. բայց ինչ վերաբերում է ձեր գնած շարժական առարկաներին, դուք, Վաշինգտոն Նեստորի՛ց, արժողութեան քառորդ մասը չը վճարեցիք, սառը պատասխան տուեց Հաշտարարը։

—Կարելի է ուղիղ էլ է ձեր ասածը, արդարացաւ Մելնիկովը, բայց այդքանն էլ աւելորդ եմ տալիս, այդ իրեղէններից ոչ մէկն ինձ պիտանի չեն, մեր մառանուամը աւելորդ տեղ միայն պիտի բռնեն։

—Էղ տնաքանդ որդամեռը ո՞նց պտի մարսի, փափսում էին բոլոր գիւղացիք, հազար մանէթանոց բաղն երեք հարիւր մանէթ ա գնահատել տուել, իր պարտքն 290 մանէթ ա, հիմի 310 մանէթով իր վրաց ա թողում, զեռ պարծենում էլ ա, թէ քսան մանէթ աւել ա տուել, ողորմութիւն ա արել։

—Այ ձեղ զուրբան, ո՛վ ասեց, որ էղ անաստուածի պարտքը 290 մանէթ ա, ընդամենը դա հարիւր մանէթ էր տուել, 300 հասցրել եմ, էլի 290 մնում ա, պարզեց տարակուսանքը պարտապան։

Միայն մի այգի չէր այս անդամի աճրդի դրուածը. շառերի տունը քանդուեցաւ։

Ամենից զգալին էր զառամեալ մահտեսի Առաքելի դէսլքը՝
Հաշտարար դատաւորը վերջացրել է իւր գործը և վերադառ-
նում է:

Նորա ճանապարհն է մի ջրաղացի առաջով։ Ուղիղ ճանա-
պարհի մէջ տեղովը՝ դիմացիցը փայտի վերաց կոթնած դալիս է մի
ծերունի։

Հաշտարարի ուղեկից ձիաւորը հեռուից ճայն տուեց ծերին՝
մի կողմը կանգնել. բայց եկողը ուշք չի դարձնում և ոչ գլուխն է
բարձրացնում։ Զիաւորը յառաջ աշտանակեց և մտրակը բարձրաց-
րած՝ սպառնում էր խիել, եթէ ծերը ճանապարհից դուրս
չը գայ։

Ծերունին դողդողում է և մէջ տեղը կանգնել է։

Յանկարծ նա սաստիկ երերաց ամբողջ մարմնով և երեսի վերաց
ընկաւ։ Հաշտարարի ձին խրտնեց, բայց ցցեց, կանգնեց առաջի ոս-
քերի վերաց և մազաչափ էր մնացել, ոտքերով պիտի կանգնէր ծերի
վերաց, եթէ դատաւորը չը յաջողէր սանձը թափ տալ և յետ քաշել։

Ամենայն դժուարութեամբ նա կարող եղաւ զսպել ամեհի երի-
վարի կատաղութիւնը և ցած թռչել թամբից։

Հաշտարարը հրամացեց իւր ուղեկիցներին վերցնել ծերին։

Նորան նատեցրին ջրաղացի պատին դէմ տուած։

Ջրաղացի ցրդոնի (անիւէ պեղը) տակից դուրս ցայտած ցօղերը
և սառը հովը յետ բերին ուշագնաց ալւորին։

— Օխա՛յ, ես քո ցէլթուքսիդ (ցայտիւն) մատաղ, վերջի շնչումն
էլի դու ինձ յետ բերիր, իւր սառած աչքերը դէսկի ջուրը դարձ-
րած՝ մրմնջում էր ծերունին. բայց սրանից յետոյ ապրեմ ո՞ւմ
համար, դու էիր իմ միսիթարանքը, կորած որդուս եթիմների (ո՞չ)՝
ապաւէնը, որ ձեռիցս դուս եկար. ի՞նչ անեմ, Աստուած իրան բարի
տա՛յ իր գործքովը...

Ծերի խօսքերը դատաւորի հետաքրքրութիւնը շարժեցին, նա
մօտեցաւ ալւորին և երկար հարց ու փորձերից այս իմացաւ, որ
իւր միակ որդին ընկել է ջրաղացի անիւի թեւերի տակ և խեղդուել։
Դաւառական բժիշկը կամեցել է անպատճառ անդամահասութեան
ենթարկել նորա մարմինը, իսկ հայրը երեսուն մանէթ պարտք վերց-
նելով բայսասան աղայից, շահել է լեզու չը հասկացող օտարազգի

բժշկին և ազատել սիրելի որդու դիակը մաս մաս յօշոտուելուց։ Այն երեսուն մանէթը տոկոսակալել է, 500-ի է հասել և այսօր որդուն կանող ջրաղացը նորա վեց որբերին էլ կենդանի կենդանի թաղում է իւր մէջ. անտէր թշուառների ապրուստի միակ միջոցն էր հայրասպան ջրաղացը, որ որդուն էլ քաղցածութեան մէջ մահցնելու դատապարտած՝ սեպհականութիւն է դառնում այն մարդի, որը, ինչպէս ծերունին վերջումն ստուգել է, դրդել է բժշկին կորատել և ապա ինքն է համոզել ծերին կաշառքի միջոցաւ ազատել իւր մեռելին անդամահատելուց։

Հաշտարարը մի սառը զգուանքով ձին մտրակել, հեռացել է սրտախաշ տեսարանից, թողած ծերունուն նոյն օրն իւր հաշիւը վերջացնել անցաւոր աշխարհքիս հետ՝ ճակատագրի կամացականութեամբ յանձնելով վեց խմբակիերներին։

Մերունու վերջին խօսքերը հասաւ բառացի կերպիւ Մելնիկովի ականջին. մի շարք անէծքներ են եղել նոքա Բալասան աղայի ժառանգներին ուղղած՝ բաց նա—շունը կը հաչի, քարվանը կը քօչի—պարսկական առակն է պատասխան ուղարկել անշնչացած դիակի ետևից՝ ու ինքը Հաշտարար դատաւորի գնալուց յետոյ՝ հրաւիրել է իւր մօտ փաստաբան չոլախ Յարութիւնին, կարգի է դրել նորա ձեռքով Դնդարենց Ասօյին սպանող Դվակոթենց Հայրօյի թղթերն ու շտապել դէպի քաղաք։

— Մի քանի օր էլ կա՛ց, աղայ ջա՛ն, Բարսեղին կանչի՛, համոզի՛, կը լինի որ քո խօսքդ լսի ու էլ չը տայ իր աղջիկը Գալօյի տղին, խնդրեց Խուդօն։

— Յիմա՛ր, ասաց Բալասան աղէն, իմ յետ մնացած իւրաքանչիւր ժամը կարող է քո գործը ծովը ձգել, յանկարծ Արտեմ Սէրգէ-ցիչը կը հաստատուի տանուտէր և քո ստներդ սառը ջրումը կը մնան, ես շտապեմ՝ որ բանը փոխեմ։

Վկաղիմիր Նեստորին ուղիղ էր, եթէ մի շաբաթ էլ ուշացած լինէր, Արտեմ Սէրգէցիչը հաստատուած էր։

Գաւառապետն օգուտ էր քաղել Մելնիկովի գիւղում ուշանալուց և միւս օրը փութացրել էր ընտրողականը ներկայացնել հաստատութեան Բալասան աղէն իւր աչքովը տեսաւ դիւանատանը հաստատութեան հրամանը պատրաստ, մնում էր միայն ստորագրելու։

— Թող երկու չէ՝ չորս շաբաթով էլ յետ մնաց հաստատութիւնը, խոստացաւ Մելիկովի շնորհքով տեղ ստացած ատենադպիրը և հը-րամանը գործերի տակը դրուեց:

— Ուրեմն ի գործ, վճռեց Ալադիմիր Նեստորիչը և ներկայացրեց քրէական ատենին իւր բերած թուղթը նրանց ստորագրողների հետ:

Բանն ի՞նչ էր: —

Չորս տարի յառաջ գաւառի գիւղերի մէկից մի հայ աղջկաց փախցնելու ժամանակ՝ սպանուեց մի թուրք բէդ և կալանաւորուեցին նորա երկու սպասաւորները: Աերջիններս խոստովանուեցան, որ իւրեանք մասնակցել էին սպանուած կալուածատէր բէզի հրամանաւ: Փաստաբան Ս. Ա. պարոնի ճարտարախօսութեան շնորհիւ թուրքերը դատապարտուեցան մի տարուայ բանտարկութեան: Նոքա իւրեանց ապաշխարանքը լրացրել էին: Այժմ այդ մարդիկը, կաշառուած Բալասան աղայից՝ թուղթ են տուել և անձամբ էլ եկել վը-կայում են, թէ իւրեանց ուզարկողն և բէզի սպանուելու պատճառն եղել է Արտեմ Սէրգէյիչը, որի եղբօր որդու համար, իբր թէ փախցնելուսեն եղել աղջկանը:

Այն թղթովն առաջնորդեց Մելիկովը թուրքերին դէպի քրէական դատախազը:

Աերջինս անմիջապէս հեռագրեց իւր օգնականին Գոմշակերովին կալանաւորելու և դատի ենթարկելու:

Բալասան աղան այսքանով չը բաւականացաւ, մի հեռագիր ևս քաշեց Թիֆլիս Արտեմ Սէրգէյիչի տիրոջը և այս մանրամասնութիւնների հետ յայտնեց, թէ իւր մօտ գրաւոր փաստեր կան նորա ստունելու էր գործակատարներից, որոնցով ապացուցում է, թէ Արտեմ Սէրգէյիչը խալվարն ութ մանէթով զնած գարին հաշուել է տիրոջ վեգէյիչը լսալվարն ութ մանէթով. Հետևաբար՝ ամեն մի խալվարի մէջ չորս մանէթողացել է տիրոջից:

Այժմ ինքը Մելիկովն առաջարկում է իւր պատրաստականութիւնը երաշխաւոր լինելու կապալառուին և փականքի տակ զնելու Գոմշակերեանցի շարժական և անշարժ կացքերը:

Երկու օր էր անցել այս անցքից, և ինչպէս ասացինք սկզբումը, Օ. գիւղացիք սարսափով լսեցին Խուղօղի տանուտէրութեան հրամանը

և իւրեանց աչքովը տեսան չոլախ Յարութիւնին՝ կնքելուս Արտեմ Սէրգէյիչի ունեցած շռնեցածը:

ԺԵ.

ՀԱՍՏԱՏԱՑ ԴԱՏԱՍՏԱՆ

—Բալասան աղէն:

—Օ՛հ, չը պրճանք այդ զզուելի մարդից, խոժոռ դէմք առած բացականչութիւն արաւ գաւառապետը՝ Օ. գիւղի ընտրութեան օրից մի քանի օր անց, երբ որ թուրք եասավուլը ներս մտաւ նորա առանձնասենեակը և յայտնեց Մելնիկովի գալուատը:

—Ասա՝ ներողութիւն էր խնդրում, հարկաւոր գործեր է ստացել, ուրիշ ժամանակ շնորհ բերէք:

Եասավուլը քայլերն ուղղեց դէպի դուրս:

—Խ՞նչ եմ գժուել, Էլ կը պրճնեմ, օրն էզուց իւր քսութիւնը գործ կը դնի, այց անիծած դաժան հոգի. սպասի՛ր, հրամայեց գաւառապետն այս կարճ մտածողութիւններից յետ եասավուլին, ասա՝ խնդրում էր:

Վերջին խօսքի հետ ինքը վեր կացաւ և յառաջեց դէպի դուռը:

—Օ՛... օ՛... օ՛... Վկաղիմիր նեստորի՛չ, յօւ պոշտու! շատ ուրա՛խ եմ, զուարժ դէմքով ձեռքը ձգեց նաշալնիկը տուն մտնող թանկագին հիւրին, այդ ո՞ր քամին պտըտեց ձեզ դէպի մեր աշխարհը, հրամայեցէք:

—Ծասիбо! և Բալասան աղէն երեք անգամ պինդ սեղմեց գաւառապետի ձեռքը:

—Զարժէ՞:

—Խնձ համար շա՛տ և շա՛տ արժէ, Գրիգոր Պետրովի՛չ, դուք ամեն ժամանակ իմ խնդիրներս կատարել էք, իսկ այս վերջին անգամն Օ. գիւղումն ինձ մեծ բարեկամութիւն ցոյց տուիք:

—Դէ՛ ի՞նչ անենք, Վկաղիմիր նեստորի՛չ, օրէնքից թէև մի փոքր շեղուեցինք, բայց պատուական բարեկամի համար մի չնչին ծառայութիւն անելը մեր պարտքն էր:

—Խ՞նչ էլ յարմար տեղ էիք ընտրել և ժամանակ, մի ժամէն ճա-

նապարհ, թուրքերի մէջ, երեկոյեան դէմ, հա՛, հա՛, հա՛, լօվեօ, նապարհ, լօվեօ, ո՞վեցո և զատի, ճա! ո՞քան խելօքութիւն, ի՞նչ հեռա-
տեսութիւն, ո՞վ ընտրուեց, ո՞վ հասուատուեց, ճա! մեր նահանդումը
ձեղ նման գործ հասկացող ոչ եղել է և ոչ կը լինի, այդ ես միշտ
տեղումն ասել և զրել եմ և այժմ նոյնպէս կը դրեմ:

—Մի՛ նեղանաք, ինդրեմ, Վկաղիմիր Նեստորի՛չ:

—Ի՞նչպէս, արժանաւոր մարդի համա՞ր, այդ խորին պարտա-
կանութիւն է իմ կողմից. մենք գործի մարդիկ ենք, գործը
պահանջում է լաւ ու վատ ամեն բան տեղ հասցնել, թո՛ղ որոշուին,
թո՛ղ ճանաչուին հաւատարիմն ու ապերախտը, բարեմիտն ու մնա-
ապկարը, թո՛ղ անպիտաններն արժանի պատիժը, իսկ արժանաւորնե-
րը վարձատրութիւնն ստանան: Այդպէս է՞, թէ ոչ, Գրիգոր Պետ-
րովի՛չ:

—Անկարծի՛ք, Վկաղիմիր Նեստորի՛չ, մենք ումից հաց ենք
ուսում, պէտք է նորա շահերն աչքի առաջ ունենանք, բայց ամեն
ժամանակ՝ տեղի, անտեղի, աննշան և չնչին դէպքերի համար ձանձ-
րութիւն տալլ սորան կամ նորան՝ աւելորդ է:

—Սխա՛լ էք, Գրիգոր Պետրովի՛չ, ես այդպէս չեմ հասկանում,
հաւատարիմ ծառան հաւատարիմ շան նման է, նա պէտք է դունչը
կոխի ամեն քունջ ու պուճախ (անիւան), իւր սուր հոտոտելիքը լարի,
պտուտի, քրքրի և ամեն գուածն իւր տիրոջը ներկայացնի: Ես միշտ
այդպէս եմ անում, խորութիւն չեմ զնում միջոցների մէջ, մեծի ու
պատկի, հասկացողի ու ռամի մէջ, ինչ տեղից՝ ինչ կապկածաւոր հոս
առնում եմ՝ ձեռաց հասցնում եմ և դուք տեսնում էք, որ
ես սխալուած չեմ. ամենքի մօտ պատիւ ունիմ, ամենքն ինձանից
քաշուում են, կամքս կատարում են, ինչպէս դուք արիք: Իրա՛ւ
է, արածդ մի մեծ բան չէ, ձեղ համար միւնոյն էր՝ Մարկոսը լի-
ներ տանուտէր, թէ կիրակոսը, բայց դուք չը գիտէք, թէ Խուզօն
ո՞րքան է ինձ պէտք. ձեղ շատ քաջ յացնի է, որ գիւղական հա-
սարակութիւնն այնքան մեր շնովնիկիցն ահ չունի, ինչքան իւր
տանուտէրից, և բնական է. նորան է միշտ տեսնում, նորանից ան-
միջական կախումն ունի, նորա աչքին է շարունակ նայում, բոլոր
իւր գործը նորա ձեռքովն է կատարելու, և ի հարիս, նորա ազդե-
իւր գործը նորա ձեռքովն է կատարելու, և ի հարիս, նորա ազդե-

ցութիւնն աւելլ կը լինի: Դուք չը գիտէք, թէ գիւղերի մէջ ես

ո՞րքան անձնական հաշիւներ ունիմ։ մի տեղ փող ես տուել՝ դժուար է ստացուում, միւս տեղ լաւ կալուածք կայ ձեռք ձգելու, երրորդ տեղում մէկը ճանապարհիդ քար է գլորում, մի ուրիշի ռեխը չի, ուղղակի, քեզ դիւր գալիս, դրանց բոլորի յառաջն առնելու է նոյն տանուտէրի ձեռքով։ Ես այսօր մեր գաւառի տանուտէրներից շատերին իմ ձեռքիս տակն ունիմ առած, ամեն տեղ իմ ցանկացածներն են ընտրուում։

— Բայց շատ էլ ժողովրդին ճնշել հարկաւոր չէ, Վլադիմի՛ր Նեստորիչ, ես վախում եմ հասարակաց կարծիքից։ Հգուց եթէ օրէնքը դատախազ չը լինի, աշխարհքը կը դպրայ, թէ՛ բարեկամի համար ժողովրդի շահերը ոտնատակ է տրուել, ժողովրդի ցանկացածը մի տեսակ գլորուելէ՝ կանդիդատին ընտրել տալու համար, բաց քուէարկութիւն է եղել…

— Հա՛, հա՛, հա՛, քրքչաց Մելնիկովը։

Դեռ ծիծաղի վերջաւորութեան ծագրը ծորում էր, որ դուռը բացուեց և կիսաբաց արանքիցն երևեցաւ գաւառապետի կրտսեր օդնականի գլուխը։

Այս մարդը մի հին ծառացող էր, յիսուն տարին լրացրած մէկն էր երևուամ։ նա իւր կեանքի մեծ մասն անց էր կացրել գաւառների դիւաններում։ չը գիտեմ՝ ո՞րտեղ, մի երկու տարի կարողացել է գրաճանաչ լինել և մոտել է հին գաւառական դիւանատները, որպէս ստորին գրագիր, բաւական տարիներ գրագրի ռոճկով կատարել է իւր մեծաւորների տան սպասաւորի և ծախսարարի պաշտօնը, վերջին արտօնութիւնն առաւելապէս վայելել է ամուսնացած մովրովների մօտ, իւր շողոքորթ աղուէսական ծամածութիւններով, ստորաքարշ շարժումներով, կանացի մանր պահանջները ճշդութեամբ հասկանալու համար՝ նա միշտ տիկնոջ ներքին յանձնարարութեանց պաշտօնեան է եղել։ Շատ գաւառներում է նա պաշտօններ վարել և միշտ երկրորդական դերի մէջ։ շատ գրագիրներ եկել, իրանից յառաջ են անցել, բարձրացել են, ատենադպիր, օդնական են դարձել, իւր վերայ իշխանաւոր են կարգուել և ինքը միշտ քիմի տակին ծիծաղելով յայտնել է իւր ուրախութիւնը՝ նրանց բարձրանալու մասին։

Քանի քանի անգամ նրան ծառացութիւնից արձակելու խնդիր է ծագել և միշտ նա հնարքը գտել է տեղումը մնալու և շատ էլ

ուրախ է, որ իւր երեսնամեայ պաշտօնավարութեան մէջ կրտսեր օգնականից չի բարձրացել:

Ահա՛ հէնց այս մարդն էր, որի գլուխն երեւցաւ և կրկնն յետ քաշուեցաւ. խոհեմութիւնը թոյլ չէր տալիս նրան առանց իւր մեծի հրամանին ներս դալու:

— Այ, ՅՈՏԵ, ՅՈՏԵ! թո՛ղ Վասիլ Վասիլիչը վճռի, ուղի՞ղ եմ առում, թէ սուտ, էլի շարունակեց իւր ծիծաղը Մելնիկովը՝ հետն էլ չը ապասելով տանտիրոջ կոչմանը, ինքը ձայն տուեց. առօտք քութեամբ:

Վասիլ Վասիլիչը զգոց մկան նման, ստորադրելոց բնաորոշ յատկութեամբ և ժայիտով դեռ մի աչքով իւր մեծաւորին էր նայում:

— Մտէք, կիամիշխանական եղանակով հրամացեց գաւառապետը, և օգնականը ներս եկաւ, անվատահութեամբ ձեռք տուեց Մելնիկովին ու նստեց դրան մօտ հեռուումը դրուած աթոռի եղբին. նա նման էր փշի վերայ նատողի:

Սկզբումը Վաղիմիր Նեստորիչին հեշտ չեղաւ կարծիք դուրս կորդել Վասիլ Վասիլիչի լեզուից, ամեն մի խօսքի հետ դեռ նախ պղուսը դարձնում էր նա դէպի իւր մեծաւորը, և երբ բոլորովին ապահովեցաւ, որ իւր խօսքերը չը պիտի դրդուն իւր իշխանաւորի զայրովթը, սիրո առաւ, աթոռն յառաջ քաշեց և սկսեց Մելնիկովին արդարացնել:

Նա միանգամայն համաձայն էր Բալասան աղացի հետ, թէ պաշտօնեան մի մեքենայ է, իւր սեպհական կամքը չը պէտք է ունենայ, պէտք է աշխատի իւրաքանչիւր ազդեցիկ մարդի կամքովն ընթանալ և այլն և այլն:

— Բայց ի՞նչ կասէ հասարակաց կարծիքը, Վաղիմիր Նեստորիչ, ասաց գաւառապետը:

— Քանի՞ կոպէկի կառնեմ հասարակաց դատաստանը, իմ բանն աջ է, թո՛ղ ով կ'ուզէ հաչէ, այնպէս չէ, Վասիլ Վասիլիչ:

Օքնականը կմկնաց. նա հասկացաւ իւր սիսալը, իւր մեծաւորը համաձայն չէր Մելնիկովի հետ, այժմ ի՞նչ պատասխան տայ, որ երկու սրի արանքից դուրս պրծնի:

— Ճք, ո՞ւ ծօս երաց! (Եղբայր, մէ՛ վակէր) ասա՛ կարծիքդ, ես նեղացողը չեմ, ես զիտեմ, որ դու վաղուց այդ տէօրիացին ես հետեւում, հրամացեց գաւառապետը:

—Իմ կարծեօք՝ Վլադիմիր նեստորիչի դատողութիւնը ճշմարիտ է, կիսավտահ վիզը ծուած արտասանեց Վասիլ Վասիլիչը. Հիմի չը կայ հասարակաց կարծիք, ամեն գլխից մի միտք է դրւրս գալիս, մարդ ո՞ր մէկին լսի. նա որ ետևիցդ քեզ դատապարտում է, երեսիդ շողոքորթում է և քո ինկարկուն է դառնում. խելօքութիւնը Վլադիմիր նեստորիչի ասածին համաձայն վարուելն է:

—Այո՛, ա՛ռ, կե՛ր, քանդի՛ր, օգուտդ ճանաչի՛ր, մեծիդ կամքը լաւ հասկացի՛ր, թո՛ղ՝ ով ինչ կամենում է՝ խօսի՝ միայն քո գրպանդ միքը լինի, քո իշխանութիւնից պատիւներ ստանաս, հաստատում էր Մելնիկովը:

—Մեզանից ամեն մէկը, կրկնեց Վասիլիչը, մի մի հասարակ գիւղացու որդի է, ի հարկէ բացի ձեզանից, Գրիգոր Պետրովի՛չ, սիալն ուղղեց նա. իմ հայրս կապոցն ուսին գիւղերումը թափառում էր, Վլադիմիր նեստորիչը մի գիւղացու որդի է. ամեն մէկս մի հնարքով դրւրս ենք եկել մեր նախկին դրութիւնից, բայց ի՞նչ կը դառնայինք, եթէ մեր քսակը մոռանայինք և մեր իշխանութեանը հակառակ դնայինք:

—Զուր ես կեղծաւորում ինձ, Վասի՛լ Վասիլիչ, ասաց նաշալնիկը, ես ինքս էլ մի իշխանական ցեղից չեմ, բայց ի հարկէ երկուսիցդ էլ առաւել պատուելի տանից եմ և համալսարանական կըրթութեամբ: Խոստովանում եմ՝ համալսարանի գաղափարները հետզհետէ օդը ցնդեցին, ըշջանն իւր ուժեղ թաթն իմ վերաց էլ դրեց, ականջներս խլացրել եմ՝ բարձր ձգտումների և ներքին ձայնի դէմ, ինքս էլ հաւասարապէս դատապարտելի եմ, բայց չեմ կարող ուրանալ հասարակաց դատաստանի ահաւորութիւնը:

—Կարելի՞ է, դուռն երեք անգամ բաղխելով՝ դրսեից գոչեց մի ձայն:

—Դէ հիմա խօսի՛ր, Վլադիմիր նեստորի՛չ, գլխով դուռը ցոյց տուեց գաւառապետը և յառաջ գնաց ու դուռն իւր ձեռքով բաց արաւ:

Ներս եկաւ մի մաքուր հագնուած երիտասարդ, քաղաքավարութեամբ ողջունեց ամենքին և ասաց.

—Զը խանգարեցի՞:

—Էնդ հակառակն, շա՛տ ուրախ եմ, հրամայեցէ՛ք նստել, աթոռց տուեց գաւառապետը:

Օքնականն օգուտ քաղելով յարմար դէպքից՝ զլխարին առաւ և շտապ գլուխ տալով՝ առանց նկատուելու՝ դուրս ծլկուեց։
—Ի՞նչպէս էք, պարո՞ն Սմբատ, քաղաքավարի հարցրեց Բալա-
սան աղան։

—Ենորհակա՛լ եմ, պարոն Մելնիկեա՛նց։
—Ի՞նչ էք անում, ընչո՞վ էք պարապած։
—Այժմ ես, պարոն Մելնիկեա՛նց, մեր ժողովրդի ներքին կեան-
քըն եմ ուսումնափրում։ անմիթա՛ր է, վերին աստիճանի տգիտու-
թի՛ւն, աղքատութի՛ւն...»

—Այո՛, պարոն Սմբա՛տ, այո՛, ի՞նչ պէտք է լինի մեր ստորին դասակարգի վիճակը, ամեն կողմից ձնշումն, հարստահարութիւնն, վաշխառուների ճիրանների մէջ սեղմուած, տնտեսական դրութիւնն անապահով, ներքին և արտաքին ցեցերից կերուած, կեղեքուած, տգիտութեան մէջ թաղուած, նայողի աչքիցն արիւն է կաթում։ Հինգ րոպէ յառաջ պարոն գաւառապետի հետ այդ ցաւերի մասին էինք խորհրդակցում, մոլորուել մնացել ենք. այնպէս չէ՛, պարոն Գրիգոր։

—Ը՞մ... ը՞մ... ը՞մ... արաւ նաշանիկն և ուսերը անխօս վեր քաշեց։ Այդ նշանակում էր՝ չը գիտեմ ի՞նչ ասեմ աներես ստախօ-
սութեանդ համար։

—Հա՛, շա՛տ ցաւալի է, շա՛տ, պարոն Սմբա՛տ, մի քանի օր ա-
ռաջ մեր գիւղն էի գնացել, շարունակեց Մելնիկովը, տարին մի եր-
կու անգամ սովորութիւն ունիմ գնալու. գնում եմ, ժողովում եմ
հասարակութիւնը, իւրեանց պակասութիւնները հասկացնում, մի-
ջոցներ եմ առաջարկում նոցա վիճակի բարելաւութեան համար, իմ կողմից յանձն եմ առնում ըստ կարեացս նիւթապէս օգնելու,
ազգասէր և հասկացող մարդկանցից օգնութիւն խնդրելու և այն և
այն։ Դէ՛, հարկաւո՞ր է, գիտեցողը չը գիտեցողին պարտական է, հայ-
րենասիրութիւնը մարդուս առաջին պարտականութիւնն է, ազգա-
սէր մարդն ազգի շահերի համար իւր կեանքը պէտք է զոհի,
տգէտ, ընկած եղքօր համար իւր կարողութիւնը չը պիտի խնայի։
Այս անգամ էլ գնացել էի հոգալու, որ մի տարրական դպրոց բա-
նանք մեր գիւղումը, իմ կողմից որքան ձեռքիցս կը դար՝ յանձն
առայ նպաստել, շնորհակալ եմ պարոն գաւառապետից, սա ևս իւր-

աջակցութիւնը չը խնայեց. այն օրը տանուտէրի ընտրութիւն ունէր, ինքն իւր գործը թողած՝ ինձ հետ մրասին խրախուսում և յորդորում էր, գործի յաջողութեան համար էլ մի արժանաւոր մարդի տանուտէր ընտրեց, որը բաւական հասկացող և ուաման նշանակութիւնը ճանաչող անձն է: Ես այսօր եկել եմ իմ շնորհակալութիւնս մատուցանել պարոն գաւառապետին. լստ որում երէկ նոր տանուտէրն ինձ մօտ էր, աւետեց, որ ինքը ժողովրդի մեծամասնութեան համաձայնութիւնն արդէն ստացել է: Ես էլ ձեռքը սեղմեցի, մօտս ճաշի պահեցի և խոստացայ իւր արածները լրագրում հրատարակել տալ. շատ ուրախացաւ խեղճը, պատուական տղայ է:

— Լսել եմ ձեր այդ հասկացող գիւղացու մասին, Գոմշակերեանց ծաղրալի ազգանուն ունի, ասում են՝ բաւականին զարդացած մարդ է, ցանկանում էի հետը տեսնուել:

— Ո՞չ, ձեր ասածը չը կամեցաւ տանուտէր լինիլ, նա օտարութեան մէջ է. այս նոր տանուտէրը նորա կանդիդատն էր, փոքր ի շատէ կարդալ գրել էլ գիտէ, շարունակ կարդում է իմ ուղարկած լրագիրները, ուրիշներին էլ տալիս է կարդալու. ես այժմ իմ շնչին ծառայութեամբս կարող եմ պարծենալ, որ մեր 0. գիւղը գաւառի բոլոր գիւղերից յառաջադէմէ. ձեզ էլ կը խնդրէի՝ մի անգամ իմ այնտեղ եղած ժամանակը շնորհ բերել, շատ կը հաւանէիք և կ'ուրախանայիք. այնպէս չէ՞ պարոն գաւառապետ:

— Ը՞մ... ը՞մ... ը՞մ... այսի՞նքն... ը՞մ... ը՞մ... ը՞մ... ոյ, ձա!

— Կարծեմ, պարոն Սմբատ, դուք ևս իմ և պարոն գաւառապետի հետ համաձայն էք, որ հարկաւոր է շարունակ մտրակել ազգի ցեցերին, աստիճանամոլ և հացկատակ պաշտօնեամներին, ժողովրդի արիւնարբու վաշխառուներին, դաւաճաններին, մատնիշներին և այն բոլորին, որոնք անձնական շահի համար խեղդում են ժողովրդի մէջ ամենատեսակ բարի ձգտում:

— Ի՞նչ կարծիք:

— Միւնոյն մաքի ենք ես և մեր Գրիգորը՝ պարոն գաւառապետը—խօսակցութիւնը հասարակաց դատաստանի մասին էր. մենք երկուքս նշանակութիւն էինք տալիս հասարակաց դատաստանին, բայց պարոն օգնականը... (վերջին խօսքի հետ Բալասան աղէն դարձաւ դէպի Վասիլի Վասիլիչի նստած աթոռը և զարմացական դէմք

ցոյց տալով՝ հարցրեց գաւառապետին) այս Ե՞րբ գնաց, որ մենք ըստեսանք:

—Նա գնաց, շտամպումէր, զլուխը շարժեց գաւառապետը:

—Ինչ և իցէ, շարունակեց Մելնիկովը, պարոն օգնականը մեր հակառակն էր պնդում, նա ասումէր, որ ծառազողը մեքենայ է իւր իշխանաւորի նպատակներին, ասում էր, որ իւր օգոտի համար մեղք չէ մարդուս յափշտակել, գողանալ, մատնութիւններ անել, ժողովրդի արիւնը ծծել, ասում էր, որ հասարակաց դատաստանը յիմար բան է, յիմարների և իմաստակների ստեղծածն է և թէ՝ ողորմելի ու ծիծաղելի են այն մարդիկը, որ ազնուութիւն, սրբութիւն, պատիւ բանի տեղ կը գնեն և իւրեանց քսակին կը վնասեն, անդումէր, որ բարձրանալու համար ոտնատակ տալու է ամենայն նուիրականութիւն, թէ հազարաւոր մարդիկ սպանել և վրայովն անց կենալ լսղճի ընդդէմ չէ և կարեւոր է՝ եթէ միւս կողմում քո նպատակիդ իրագործումն է:

—Հրէշի՛ խօսքեր, բացականչեց Սմբատը:

—Մեղաղբելի չէ, խեղճը տգէտ, փթած, դիւնատների ստորին խաւերի պոտուղ է, ստորաքարշութիւնից աւելի ի՞նչ էք պահանջում: Ազդպիսիների կարծիքն ինձ համար հաւասար է զրօյի. ուրիշ բան էր, եթէ պարոն գաւառապետի նման զարգացած մարդիկն ասէին, թքանք էր, եթէ իմ բերանից դուրս գար, ձեր մասին՝ բերանս էլ չի զօրիլ խօսելու, դուք միանգամայն թարմ ոյժ էք, գնացել էք, մտաւոր զարգացումն ստացել և եկել, պաշտօն, կոչումն, հաց, ամենայն ինչ մոռացել էք և հոգով, մոքով ու մարմնով նուիրուել ազգային վերաշինութեան սուրբ գաղափարին. զլխով մատաղ կը լինի՛մ ձեղպէսներին:

—Ամենքիս պարտքն է:

—Զէք հաւատում, հոգիս փառաւորումէ, երբ մեր նոր երիտասարդութեան ձգտումները դիտումեմ, ձեզ քաջ յայտնի է իմ պաշտօնս, որ պահանջում է ճշղակատարութիւն. բայց անիծուի՛մ ես իմ ազգովս, Վասակ կոչուի՛մ; եթէ ես իմ ազգի զաւակներին խէթ նայիմ, կարծիքներս լինում են միշտ նպաստաւոր:

—Աննպաստ ոչինչ էլ չը կայ. այսօր ամեն մի բանադէտ մարդու պարտքն է իւր գիտեցածը տգէտ եղբօրը հայորժել. նոյն ուղղու-

թեամբ կրթում է ամեն մի լրասաւոր վարչութիւն իւր նոր սերընդին, ի՞նչ կարծիք, ուրեմն, որ նա ուրախ կը լինի, երբ իւր տուած դաստիարակութիւնն արդիւնաբեր է լինում:

— Իրա՛ւ էք ասում, սիրելի պարոն Սմբա՛տ, բայց իմ փոխարէն ուրիշը կարող էր զանազան հայեացակէտերից նայել ամենքի բռնած գործին և ըստ այնմ իւր անելիքը կարգադրել. այսօր, դիցուք, պարզ ուսումնասիրական նպատակաւ դուք ժողովրդի կեանքն էք հետախուզում, մի՞թէ դժուար էր ինձ ծուռը մեկնութիւններ տալ այդ ամենին:

— Հրէշների մեծն այդպիսի անպիտանները կը լինին:

— Մի՛ զարմանաք, կը լինին և կան, բայց ես նրանցից չեմ, ինձ համար հասարակաց դատաստանը սուրբ է, պարոն գաւառապեար կարող է վկայել: Սակայն այդ թողնենք, պարոն Սմբա՛տ, ամեն մարդի գործ իւր համար կը վկայի, չը կայ ծածուկ, որ չը յայտնուի. դուք այս ասացէ՛ք, չէ՞ր կարելի ձեր կողմից մի բանով մասնակցէիք մեր ձեռնարկութեանը. վատ չէր լինիլ, եթէ լրագրութեան մէջ մի քանի տող դրուէր, ժողովուրդը կը քաջալերուէր և իմ չնչին ծառայութիւններս կարող էին ուրիշների բարի նախանձը շարժել:

— Ամենայն ուրախութեամբ, պարոն Մելիկեա՛նց, ես շարունակ գրում եմ պարբերական թերթերում, այդ ևս անպատճառ կը հաղորդեմ. սակայն ներեցէ՛ք, ես ուշանում եմ, մէկին ժամադիր եմ, ես եկել էի պարոն գաւառապետից մեր գաւառի հայ ժողովրդի վիճակագրական տեղեկութիւնը ինդրելու, բայց միւս անգամ կը զամ, այժմ ցտեսութիւն:

Այս խօսքերով երիտասարդ Սմբատը հրաժարական տուեց իւր խօսակիցներին:

— Ամմ...մա՛ լեզու, Վաղիմիր Նեստորի՛չ, բացականչեց գաւառապետը:

— Այդպէս տխմարներին ուրիշ տեսակ չի կարելի, Գրիգոր Պետրովի՛չ, հասարակաց դատաստանը դորա նման յիմարների ստեղծածըն է, դրանց զէնքն է, պէտք է դրանց փշրել իւրեանց զէնքով:

— Սխալուում ես, սիրելի՛ս, ճշմարտութիւնը չի մեռնիլ, դուք ասացիք, որ ամեն գաղտնիք յացնի կը լինի:

— Ի հարկէ՝ եթէ յիմարի պէս կը քննենք ու այդպէսներին լաջն ասպարէզ կը տանք: Մի հարցնող լինի՝ թէ ո՞վ ես. ինքն երէկուան մածնի աման լպատողն է, հայրը զիւանատանը գրագրութիւն անելով մի քանի կոպէկ հաւաքեց. աշխարհքի կոյր ժամանակն էր, լաւ լաւ կարուածքներ յետ ձգեց, որ այս տփէտն անխնայ փչացնի. բարեգործութիւններ է անում, ընկերներին է ուղարկում, զիւղերումն է վատնում, հէնց կարծում է, թէ շարունակ անսպառ ալբրի նման. կը բղի. արդէն շատ չի քաշիլ, մէկ այդին իմ ճամկը կ'ընկնի, իւր խնամատարի հետ ծրագիրը կազմել ենք, վաղը միւս օրը փողի կարիք պէտք է ունենայ և ինձ զիմի: Խելքից պակա՛ս, զեռ մեծ մեծ է փրթփրթում, դեռ նոր է եկել, թող լիառատ ցրուի. յետոյ ուշքի կը գայ, այդպէս մնալ չի. շատերին ենք տեսել՝ բարձր իդէա՛, վսեմ գաղափա՛ր, ազգային զգացմունք, ազնուութիւն, ճշմարտութիւն և այդպիսի անհամար բառեր թութակի պէս կըրկնելուս, անդիր արած փշելուս. բայց ո՞ւր են, եկել են, խառնուել մեր մէջ, կեանքի հոսանքին ենթարկուել և մեզանից աւելի նիւթապաշտ ու շնական դարձել: Այդպէսներից մէկն էր և իմ խելօք փոքր եղբայր՝ Արտեմը. չը գիտեմ՝ լսե՞լ էք, որ նա սկզբումը Պետրոս էր, իւր ծննդականումն էլ գրուած էր՝ Պետրոս Մեսրոպով. այդ անունովն էլ զիմնազիւումն էր շարունակում: Գնում է այնտեղ, ի՞նչպէս է լինում, ո՞վ է խելքին փչում, աշխատում է անունը փոխել՝ Արշաւիր Մեսրովբանց: Ես, ի հարկէ, նեղացայ, երբ ստացայ իւր նամակը, բայց յիմա՞ր էի, որ խօսեմ, կամ դէմք ցոյց տամ. դեռ հաւանութիւն տուի և խրախուսեցի: Վերջը՝ երբ եկաւ այստեղ, ծառայութիւն մտցրինք, մի տարուց՝ տեսնեմ, տրտնջում է իւր արած յիմարութեան վերայ, թէ շատ անհաճոյ և դժուարալուր է ականջի համար՝ Արշաւիր Մեսրոպովիչ Մեսրովբեանց կոչումը և կամենում է կրկին փոխել: Նատել ենք, մի քանի օր մտածել և հազիւ կարողացել ենք Արշաւիրը փոխել Արտեմ Նեստորիչ Մելնիկով:

— Հապա էլ ընչի՞ էր սկզբումը յիմարանում, որ վերջն այդպէս պէտք է անէր, հարցրեց գաւառապետը:

— Դեռ այդ ոչինչ, ծիծաղելին պասկուելուց յետոյ մարդ ու կնոջ գործերն էին. նշանուելու օրից մտել էր հարսնացուի տամարը, որ Խոկուհի անունը փոխել տայ Վասիլիսա և նորա հօր՝ Արշավի ա-

նունն էլ շինել տայ Ալէքսէյ: Քանի նշանած էին, աղաչանքներով էր ուղում համոզել, բայց պասկուելուց յետոյ բանը մեծացաւ, փոքր մնաց՝ ահազին անբաւականութիւն էր դուրս գալիս: Ոչինչ բանով հարս թոյլ չը տուեց իւր անուան փոփոխութիւնը. Խսկուհի մը կրտսուել եմ, ասում էր, Խսկուհի էլ գերեզման եմ մտնելու: Վերջը մի տեսակ ընտանեկան խորհրդով այդ կրակը հանգստացրել ենք. վճռել ենք, որ ամենքին էլ վարժեցնենք հարսիս տիկին կոչել. և ինչպէս տեսնում եմ՝ հարս իւր կարգի կանանց մէջ միակ բացառութիւնն է, որ տիկին բառով է վերակոչուում:

—Ես այդ չը գիտէի, ինչպէս երևում է՝ եղբայրդ սկզբումը շատ եռանդրու է եղել:

—Ի՞նչ եռանդ, Գրիգոր Պետրովի՛չ, ինչպէս ասում են, գլուխը հոպոպներով լիքն էր ո՛չ, Եօյե որ (Աստուած իմ), ի՞նչ նամակներ էր գրում, ի՞նչ փոթորիկներ էր բարձրացնում, ի՞նչ ցնորամիտ առաջարկութիւններ էր անում ինձ այնտեղից, ումբիո! (ծէծաղէլի է) ասում եմ հասօպի ֆանֆորոն. (Հագարեալ Աւելի-ունիչ) ու օտար (այսինքն) օրական հինգ նամակ էր գրում:

—Թէ ի՞նչ, որպէս թէ...

—Գլխիս գայլի աւետարաններ էր կարդում, շարունակեց Մելնիկովը, թէ լսում եմ, որ ինձ համար ուղարկած 150 մանէթը դուժողովել ես մի չքաւոր ուսանողի անունով մի հայաբնակ քաղաքում, այն էլ կրկնապատիկն է եղել, կէսը քեզ համար ես վերցրել, միւս կէսն ինձ ես ուղարկել և գրել ես, թէ մի մասը քո արդար վաստակից և միւս մասը մեր հայրենական կալուածքի եկամտից ես ստացել, թէ ինձ տեղեկութիւններ են հասնում, որ դու վատ ճանապարհի վերաց ես կանգնած, կաշառակեր ես, ճնշող, հարստահարող ես, մատնիչ ես, անարժաններից կաշառք առնելով՝ ժողովրդի վերաց մոլորեցուցիչներ ես կարգում՝ արժանաւոր զեկավարների փոխարէն, թէ վատ և անբարեբարոյ անձանց շրջանումն ես, ուղղուի՛ր, ասում է մեր տան անուանը թքանք մի՛ լինիր և հազար ու մի սրանց նման կրց պառաւի քարոզներ:

Ես, ի հարկէ, քթիստակին ժպտում էի միայն:

Մէկ էլ դա ինձանից փող է խնդրում և ճանապարհ ընկնում, գալիս է. և ի՞նչ, լսում եմ, որ ամեն տեղ, ծանօթի և օտարի մօտ իմ ստուերի դէմէ կռուում, հայշոյրւմ:

—Գետինը մտնի՛ Բալասանը, վշուի՛ Բալասանը, ես կը գնամ՝
եթէ իմ խորհուրդա չը լսի և իւր չարութիւններից յետ չը կենայ,
աղնիւ մարդ չը դառնայ, ես նրան բարե չեմ տալ: Ո՞ր քաղաքը
մտել է զուռնայ փէելով իմ օձիքիցն է ձաւար ժողովել (բահմառել):

—Հա՞ այդ ես չեմ լսել, Վկաղիմիր նեստորի՛չ, զարմացական
նշաններ արաւ գաւառապետը:

—Ականջ դի՛ր, Պետրովի՛չ, դա այդ քամիներովն է գալիս, ես
այստեղ դորա համար իւր ասած անբարեբարոնների շրջանում իւր
նախկին պաշտօնն եմ ստեղծում: Քեզ քաջ յայտնի է, որ նորա պաշտօնը
առաջին անգամը մեր պարոնի մտնելով բացուեցաւ այն դիւանա-
տանը. ճիշդ է, ծրագիրը կար, բայց բացուելն ես փութացնել տուի՝
բարեկամների եռանդալից աշխատութեամբ:

Եկաւ, իջաւ, առաջին եղբայրական համբուրի հետ առաջին
խօսքն եղաւ ինձ կշտամբելը.—ես քեզանից վշտացած եմ, մեր
ազգի անտւնը խայտառակել ես:

—Թշնամու խօսքեր են, ասում եմ, ահա եկել ես, բարի աչ-
քովդ տե՛ս, և ստուգի՛ր, յետոյ պատրաստ եմ խօսքդ լսելու:

—Հետաքրքիր է, Վկաղիմիր նեստորի՛չ, խնդրեմ պատմե՛ք:

—Այս՛, գեռ հագուստը չը փոխած՝ ես սկսեցի հիմիկուաց յի-
մարին ծախած խօսքերս նորան էլ շուայլել—բարձր ձգութիւնի՛ր
ազնուութիւնն, ժողովո՛ւրդ, ուսո՛ւմ, ստորին խաւե՛ր՝ սովորական ոճեր
ու նախաղասութիւններով դրա քաղցած ուղեղը լցրի:

Այդ յիմարը ձեռաց խօսքերս հալած իւղի տեղ ընդունեց, վեր
թռաւ, նորից զրկեց ինձ ու սկսեց դատապարտել իմ մասին սուս
սուս լուրեր տարածողներին, իրեն վրդովողներին: Միւս օրն առանց
երկար մտածելու՝ գրեց այնտեղ իւր ընկերներին, որ իբր թէ, ինձ
վերայ ասուածները բոլորը չարալեզուների մտացածին զրպարտանք-
ներ են:

—Попался несчастный! (Առկարդն է ընկել Աշուառու):

—Попался և այն ի՞նչպէս: Դա, ի հարկէ, փող չունէր.
սկզբներումը թոյլ ևս չէի տալիս խնդրելու: Ամեն առաւօտ քնած
ժամանակը մտնում էի սենեակն. և իմ ձեռքով կարմիր տասանոց
թղթադրամը քսակը դնում: Առաջին անգամը միայն զարմացաւ, թէ
հրաշքով իւր քսակումը փող է երևեցել: Միամտացրի, որ ես եմ

զրել՝ ձեռքին մախելու և ծխախոտի համար: — 0'հ, ասաց. մարդկային հրեշաւոր տգիտութեան մեծն այդ անպիտան բոյսը դործածելն է, ես ոչ ծխում եմ և ոչ ծխողներին սիրում:

— Հիմա բերանիցը չի ձգում այդ ցանցաղը:

— Համբերի՛ր: Մի օր՝ ատամն ցաւում է, ասաց. ծխախոտը ձեռքով վառեցի և առաջարկեցի ծխել, ծուխն ատամի տակին պահել: Թէև մեծ դժուարութեամբ՝ բայց համաձայնեց: Իմ բաղդից՝ ծուխը զօրաւոր ազդեցութիւն գործեց: Այդ իմ պարզամիտս սկսաւ ովսաննաներ կարդալ հրաշագործ ծխախոտի մասին: Ես, ի հարկէ, այդքանն էի ցանկանում: Նոր վարժուող ձիու մտրուկի նման սկսեցի փոքր առ փոքր վարժեցնել. ձրի ծխախոտ՝ բարձր տեսակից՝ քսակումն անվաստակ փող՝ մէկի փոխարէն հինգն էր ծծում և փքուն փքուն բառեր ցրիւ տալով՝ քամիներ անում:

Գէտք է տեսնէիք, Գրիգոր Պետրովի՛չ, ի՞նչ ոստոսիւններ էր անում, երբ պաշտօնի անուն էի տալիս.—ի՞նչպէս. ինքը պէտք է մտնի նեխած մթնոլորտի մէջ, աւահոգիների շրջանը: Լսել չէր ուզում, ականջները փակում էր, անկիւնից անկիւն էր փակչում, մանաւանդ կատաղում էր, երբ իւր ծառայակիցների անունն էր լսում:

— Անմե՛ղ երեխաց:

— Կա՛ց, ասում եմ մտքումս: Ակսում եմ զրա օրաթոշակը պակասեցնել, տասանոցի փոխարէն՝ հնգանոց, հետղհետէ երեքանոց, միանոց և մի օր էլ՝ բան չը կաց: Մոռացայ ասել, որ այդ ցանցառն իւր հաշիւները չէր հասկանում, և ի՞նչ հարկ կար, քանի որ իւր ասածով և իմ հաստատածով՝ փողը ձեռքի աղտոտութիւն է, չարժէր ուշադարձութիւն անել. անմիտը տեսնում էր, որ տասանոցի մանրորդը քսակումը չէ և չէր էլ հետաքրքրուում, թէ ո՞ւր է:

— Ի՞նչպէս թէ քսակումը չէ, հարցրեց գաւառապետը:

— Ո՞րտեղից կը լինէր, միշտ ես հանում էի. երեկոյեան անկողին մտնելում՝ քսակն անհոգ շպրտում էր սեղանի վերաց, ես քնելուց յետոյ ներս էի գնում, դատարկում և մի կարմիր տասանոց փոխարէնը զետեղում, դուրս գալիս: Եղբա՛յր, այդ խելքի պտուկը ոչ մի օր չը հետաքրքրուեց, թէ իւր փողերն ո՞ւր են:

Մի օր էլ, ինչպէս ասացի, ո՛չ ծխախոտ կայ և ո՛չ փող: Զայն է տալիս ծառային և բարկանում: — ի՞նչո՞ւ այստեղ ծխախոտ չը կաց:

—Որովհետև մեծ աղայի մօտ փող չը կաց, որ գնենք, ասում է նախապատրաստուած ծառան և աւելացնում է. այսօր իմ ձեռօք հարևանից մի մանէթ խնդրեց:

—Խնչակս, աշքերը չոելով՝ զարմացմամբ հարցնում է ծառացին, դու ասում ես, որ եղբայրս փող չ'ունի՞:

—Ո՞րտեղից պէտք է ունենայ խեղճ մեծ աղան, խաղինաց (ռը-ըսմ) հօ չէ՞ Կտրում, կրնում է սատանայ ծառան. քանի դրւք եկել էք, օր ըստ օրէ պարտքի տակ է ընկնում, սրա՞նից, նրա՞նից վերցնում, ձեզ էր տալիս և հիմա ամենքը մերժում են:

—Ուրեմն ես մեծ ծանրութիւն եմ եղել քեզ համար, ասում է ինձ այդ օրուան մեր տվորականից աղքատիկ ճաշի վերաց:

—Ընդ հակառակն, պատասխանում եմ, քո եկած օրից ուրախութեանս սահման չը կաց, թշնամեացս լեզուները պապանձուել են, ինքդ աջ ու ձախ հարց ու փորձ ես անում և ստուգում, որ հակառակորդների մեքենաներ էին իմ դէմ իւրեանց տարածած լուրերը:

—Այդ թո՛ղ, եղբա՛յր, վշտացած ընդհատում է ինձ, ես լսում եմ, որ դու պարտքեր ես անում իմ հաճոյքներիս համար:

—Չ'արժէ, ասում եմ, դորա վերաց խօսել: Թէպէտ քանի մի օր է անպիտանները զլանում են ինձ պարտք տալ և այն անկասկած չարակամներիս զրդմամբ, բայց ես առաջիկաց ծննդեան տօներին իմ պաշտօնատեղից հարիւր մանէթ պարզե պիտի ստանամ, ամենքին կը վճարեմ և քեզ համար էլ փոքր ինչ ծախսելու փող կը խնայեմ. դժուարն երկու շաբաթի չափ է, համբերի՛ր, մի տեսակ կառավարութի՛ր՝ յետոյց:

—Ասում ես՝ կառավարութի՛ր, ներս է գալիս պարոն եղբայրս միւս օրն ինձ մօտ, ի՞նչ անեմ, ծխախոտ չ'ունեմ, թերատ թափածներս երեկոյեան ժողովեցի կառավարուեցի, իսկ այսօր գժուածի պէս ծըլխել եմ ցանկանում և չ'ունեմ:

—Համբերենք, ասում եմ, ես ևս չ'ունեմ, անպիտան վաճառողըն էլ քանի մանէթ պարտականութեանս պատճառաւ ապառիկ տալը մերժում է:

—Եւ մի՞թէ որ և իցէ գործ չեմ կարող ես կատարել, հարցնում է ինձ յուսահատութեան գաղաթնակէտումը, մի ծխախոտի գի՞ն ևս չեմ կարող վաստակել:

—Մի տե՛ղ միայն կայ պաշտօնի մտնելու, ասում եմ, բայց փոստ մթնոլորտի մէջ չէի ցանկանալ քո մաքուր և լրսաւոր միտքը պղտորել:

Ցետոյ առաջարկում եմ խելքի բուն սիրելոյս իւր համար նախապատրաստած տեղը, ուր եթէ խօսք կը տայ չը տոգորուիլ ։ Միապատողների փշացած բնաւորութիւններով, ապա ինքը վաղուանից կարող է շարունակել:

—Երեխա՞ց եմ, ի՞նչ է, վիրաւորուած պատասխանեց եղբայրս, փորձանաց բովի մէջ է զտուում ուկին ուրիշ խառնուրդներից:—Եւ որ գլխաւորն է, շարունակում է նա, ես յոյս ունիմ անձնական աղնուութիւնով օրինակ հանդիսանալ այդ սեամաղձ և սեահոգիներին՝ դառնալու դէպի իւրեանց կորցրած ճշմարտութեան ճանապարհը:

—Եւ որ գլխաւո՞րն է, կրկնում եմ իւր խօսքերը, ես առաւելապէս ցանկանում եմ քո այնտեղ մտնելու, որպէսզի և այնտեղի մասին վարատես քո թիւր կարծիքներդ՝ ինչպէս արիր իմ վերաբերութեամբ. իսկ մեր մեծը, ի պատիւ իմ, քո երեք ամսականդ այս դիմից է խոստանում վճարել՝ իբրև նոր մարդի:

—Մտնե՞լ, անպատճա՞ռ մտնել, շեշտեց եղբայրս, ճի՛շդ է, ես աննպատճաղաբարներ եմ կազմել ձեր պաշտօնակիցների և մանաւանդ ձեր գլխաւորի դէմ, խոշոր խոշոր յանցանքներ եմ լսել, բայց այսօրուանից սկսում եմ համոզուել իմ ակամայ սիսալանացս վերայ:

—Այո՛, այո՛, հաստատում եմ ես և միւս օրը ոտնամուտը շընորհաւորում 225 կլորիկ մանէթներով՝ իբրև թէ մեր գանձապետից ստացած և ի հաշիւ իւր ստորագրած:

—Մնացեալն աւելորդ է, ընդհատեց Վլադիմիր նեստորիչի երկարու ձիգ պատմութիւնը գաւառապետը, այնուհետեւ ես քո եղբօրդ քեզանից լաւ եմ ուսումնասիրել, թէ նա ի՞նչ պառուղ է. այժմ նա անպիտանութիւնով քեզանից ամեն բանում երկու աստիճան յառաջ է գնացել, դու ողորմութիւն ես, վաղն Աստուած հեռու տանի, քո թշնամին չ'ընկնի նրա որոգայթների մէջ:

—Ճի՛շդ եղբօրս նման է այժմեան գնացող մեր ցանցառ Սմբատը. միամիտ ողորմելի՛, դեռ քամիք են գլխումը բզզում, վզզում, դեռ նոր է շնորհ բերել, դեռ հայրենական բառը վաստակը ջուրը գցելու օրերն են. թո՛ղ անի, թո՛ղ ժողովուրդ ուսումնասիրէ. դեռ սպասենք

մի քանի ժամանակ, եթէ դա էլ չը մտաւ փորձանաց բովի մէջ՝ իմ եղբօրնման ոսկի գուշը գալու, այն ժամանակը մենք կը մաքրենք մեր աշխարհըն այդպիսի ցաւերից. կամ այնպէս կ'անենք, որ ինքը կը իրանի, պոչը տնկած՝ մին կը փախչի, կամ փաղի մեղաւորի նման, որ չէր կամենում դժոխք մտնել, գլխին վէր հասելով կը զլորենք անդունդ և կամ կը կակղի, կուտի, և, ինչպէս առածն ասում է, եկել է մեր մէշէն (անպատ), կը սովորի մեր փէշէն (որկեսոք):

— Ը՞հ, օ՛ֆ, փնչացրեց Մելնիկովը, ացդպէսների ոլսերիմն եմ, դրանք մեր անունը մեռցնողն են, դրանցից մէկն էլ մեր գիւղումը կայ, թող՝ ես դաւաճան անուն տանեմ, միայն թէ այդ երկաթի ձուաներ ածող նոր նոր հաւերի արմատը կտրեմ:

— Ում մասին է խօսքդ, հարցրեց գաւառապետը, մի Գոմշակերեան ունէինք, գլուխը խաշեցիր:

— Նրանից աւելի վտանգաւոր Սիսակն է, Գրիգոր Պետրովի՛չ, եթէ չեմ մեռնիլ, նա էլ Արտօյի հացը կուտի:

Վկաղիմիր նեստորի՛կ շարունակութեանը վերջ տուեց գաւառապետի ամուսինը, որ տուն եկաւ, ողջունեց և նորա թեւը մանելով ասաց.

— Հերիք է, շատ խօսելով կատիկդ չորացաւ, ձեր ձայնը չէր թողնում իմ գառնուկին օրորոցումը հանգատանալ, հիմա գնանք մի կժղաց օղիով թաց անենք կոկորդդ:

ԺԲ.

ՏԱՆՈՒՏԷՐ ԽՈՒԴՕՆ

Տանուտէր Խուրծոն երկու-երեք շաբաթ է պաշտօնի մէջ է իւր ընկեր սուղիաների հետ. նա ամենքին տակն է կոխել. բարակ կարմիր թբլիսի փայտի ճիպոտը ձեռքն է առել, տանուտէրական մեդալը պարանոցից կախել, շլթայն երևեցնում է, իսկ մեդալը դեղնագոյն ուղուի բըդից չուխայի վերնածոցումը թաղցրած՝ գիւղի էս գլխից մտնում, միւս ծացրից դուրս է գալիս:

Խուրծօյի առաջին գործն եղաւ դաստարանը կարգի բերել: Գեղավարական օրինագրքի կանոններին համաձայն՝ տանուտէրը դաստարանի վճիռների կատար ածողն է միայն, իսկ նա՛ իւր քամակին կանգնած

Հովանաւորողի ուժով՝ ամենից յառաջ իւր բռան մէջ ժողովեց դատաւորներին:

Խուզօն բազմած է մի հողայատակ շինութեան մէջ՝ սեղանի ճակատին, նորա աջ կողմից շատ մօտ նատած է գրադիր Վանեցին. սեղանի աջ և ձախ երկանութեամբը դատաւորներն են երկայն իշունուկ ասած նատարանի վերաց կզած, սեղանի վերաց անկարգ անկան սփոռուած են մի քանի թղթեր, երկու մատեան և կիսաբաց գիւղական օրինատետրը:

Մինչև այսօր դատարան նստում էին գործից ազատ օրերը. իսկ հիմա տանուատէր Խուզօյի նոր տնօրէնութեամբ շարաթն երեք անդամ դատարան կաց և միշտ բողոքաւորներն անպակաս են:

Սենեակը լիքն է գիւղացիներով:

—Ո՛վ գանգատ ունի՝ յառաջ դաց, ձայն է տալիս գրադիրը և աշա մօտենում է մէկն և իւր տրտունջը յացնում:

—Դու մեղաւո՞ր ես, կամ գլուխը քա՛րն է տուել քո հակառակորդը, գոսումէ Խուզօն և խելքի կորած վճիռը դնում ու հրամայում գիւղական գրադիրին՝ դբել ու առաջարկել դատաւորներին ստորագրելու:

Դատաւորներն անխօս և հլու հպատակ են Խուզօյին: Ակզներում գրադիրը ծածուկ, աշկարաց մի քանի անգամ օրէնքի տառը միշտնելով Խուզօյին՝ հասկացրեց իւր ապօրինի վճիռները, բայց նաշան տեղ չը դրեց իւր Մենտորին:

—Եատ մի՛ գուրստալ, ասումէ տանուատէրը, առաջնորդը ես եմ, բակլէն լսաշած եմ ցանում, ես քեզ հրամայում եմ պիսը ըլութիւն դանես, ինձ խելք չը սովորցնես, թէ չէ պոչդ կը խուզեմ, լակոտներդ կատուի պէս ռեխտ տուած՝ բորիկ ոտով մինչև Վան մին կը փախցնեմ:

Վանեցին ծործորակը քորեց ու ձայնը փորը քցեց:

—Զեր ոտք մեր զիսէն առաւել կը հասկնայ, արդարութիւն ձեր բերանով կը յաղթանակէ, շողոքորթեց նա և տաղ արեց:

Խուզօն միայն դատարանումը չէ վճիռ կտրում: ո՛ր փողոցումը կ'ուզես, ի՞նչ քունջ ու պուճախում ասես՝ նա է բուսնում: Էնքան մինի, որ լսեց, թէ մի տան մէջ երկու եղբայր իրար սառը խօսքեր են ասում, մարդ ու կին մի ընտանեկան խնդրում անհամաձայն են

գտնուում, մէկի անսասունը հարեւանի բակն է մտել, մեր շունը ձեր կտերը հաշացել է՝ վերջացաւ. յանկարծ կամ փայտը հեռուեց վրէդ թափ տալով ինքն է անձամբ յարձակուում կատաղի գայլի աչքերով, կամ թէ զզիրն ու եասավուն երկուուր միասին եկան, առանց ըստ կամ թէ զզիրն ու եասավուն երկուուր միասին եկան, առանց ըստ և այլութեան քեզ քարշ տուին տանուտէրի դիմաց և այն ժամանակ վահանջում է լուել, ապա թէ նակը վահանջում է օրին. յորհեմութիւնը պահանջում է լուել, ապա թէ ոչ, կակուղ թբլիւնքիդ շամփիրի նման երկան, շերտեր կը թողու:

Սակաւ մարդիկ մնացին գիւղումը, որոնց փողը չը մտաւ կարճ միջոցում Խուզոյի գրպանը. արդար ես, թէ մեղաւոր, միւնոցն է, դու էլ, քո հակառակորդն էլ պարտական էք տալ. հերթը քո՞նն է, թէ ուրիշինը, քո դործը չէ քննելը, դու լուիկ մնջիկ մի մարդի օրավարձ տուր, կամ զնա՛ արքունի կոռ ու բէդառը քաշելու. կարեւորութիւն և պահանջ կայ, կամ ոչ՝ քո հարցնելիքը չէ. տանուտէրը հրամացում է ձիդ հեծնել, սայլ լծել, կամ հետևակ զնալ մի տեղից միւս տեղը զինուորական պաշար տեղափոխելու, թուղթ տանելու, մեծաւորի ուղեկցելու և այն:

Խ՞նչ անելու է, առաւել լսու է 40, 50 կոպէկ վճարել, քարէ քար, սարէ սար չ'ընկնել, քան թէ զզիր եասավուլի անպատկառ հացհոյանքներին և տանուտէրի մահակներին ենթարկուիլ, քան թէ պատիւդ ոտնատակ անել և բանուումը մի օր փակուիլ:

Մի քանի հոգի միայն ազատ էին պրծել Խուզոյի հալածանքներից. չը հաշուած դատաւորներին, իւր մերձաւորներին ու Վանեցի գրագրին՝ նոքա էին Մելիք-Բաղալն և Սիսակը:

—Դրանք բռնուումն հուալ տուած են, դեռ դրանց համար պահած ա, չեմ շտապում, ա'լի էր քաշում մի երեկոյ Վանեցու մօտ Խուզօն. փորս եփ ա դալիս, որ չեմ կարում ճանդս քցել Գոմշակերի թռուանը—մեր աղայ Արտեմ Սէրգևիլիշին։ Ասենք հողին հանել ենք, ունեցած չունեցածը փեշատի (էնէ՛) տակ ենք դրել, բայց ինքը նախչուանում ընկած՝ օխտն օրուան ճամփայ հեռու ա, ինքը պատի ձեռս ընկնի, որ օրը մէջ ծակը կոխեմ (բանադրէնել), լսեղդեմ, հողին կատիկը (էրէնդր) թուցնեմ։

—Դուք այնքան բարի գտնուած էք սակայն, որ Գոմշակերեանի եղբայր մանրավաճառ Պետրոս շարունակ ձեր ստուերին դէմ կը տըր-

տընջայ, իւր եղբօր վրէժ ձեզնէ առնել կը սպառնաց և դուք ազատ թոյլ կուտաք զնա իւր փոքրիկ խանութով գիւղ կեղեքել, համեստ պատասխանեց գրադիրը:

— Եարաթ չի անցկենալ, որ ես նրան շտրաֆի տակ չը քցեմ, կոռ ու բէգեառ չառնեմ. էլ ի՞նչ անեմ, մարդը գիւղի ա (հայո) տալիս՝ առ ու տուր ա անում, հօ չե՞մ կարող դուքանը փակել, զարմացաւ տանուտէրը:

— Սակայն օրինազանց միշտ կարելի է պատճել, եթէ ձեր բարեսրտութիւն թոյլատրէ զձեզ:

— Ախար ի՞նչ դռնով, մտամոլոր հարցրեց Խուդօն:

— Բաւական է, եթէ մի հաս երիդ քակած ծխախոտի փաթեթ գոնաք խանութիւն մէջ, այդ ինքնին մաքսանենգութիւն է:

— Պէտօն էն շունն ա, որ բաց արած պապիրոսի պաչկէք պահի՞:

— Մենք երեկ մեր ձեռքով չորս հինգ հատ քակեցինք և յետքի կողմը թագուցինք, երբ ինք տաճկին փշատ կը վաճառէր, աչքով արեց Գնթունին:

— Հա՞ բառ թո՞ղիմ բացությունը ուրախութիւնից ճխաց տանուտէր Խուդօն:


* ԽԻՂԱԲԵՐ
ՍԵՐՈՐԵԱՆ ԽՈՎՈՎԱՆԻՒԹ 1918 *

Լոյս չը բացուեցի սև ու մութ բացուեց Արտեմ Սէրգէյիչի եղբայր Պէտօյի դիլսին:

Կիսագազը ձեռքին չիթը չափում էր յաճախորդի համար, որ տանուտէր Խուդօն իւր դատաւորներով, գրագրով ու զզիր-եասավուլով տուն մտաւ, յառաջ գնաց դէպի Գնթունու աշքի պոչով ցոյց տուած ապրանքի շարքը, քրքրեց ծխախոտները, ջոկեց նրանց միջից տասնի չափ բաց արած փաթեթներ և բարձր ձայնով ասաց.

— Թագաւորի խաղինին խէթ մտիկ տուողին օրէնքը պատժում ա, դու բաց պաչկէքանցից (փաթեթ) հատով պապիրոսներ ես ծախել. էս օրուանից դուքանդ փէչատում եմ (ի՞ստէլ), մինչև աքցիզնի չինովնիկի (հայուապէտ) և ոլէս տչու (քննիչ) գալը:

— Պապիրոսի պաչկէքն իրաւունք ունիս փէչատելու և պրոտկոլ (արշանագրութիւն) անելու, մէջ խառնուեց յաճախորդը, բայց դուքանի վրայ փէչատ դնելու՝ ոչ:

— Ընչանք ե՞րբ Քահրատի փուշ դառնաս, առաջիս ցցուես, դուզ ճամփիս քար շաղ տաս, բորբոքուած յարձակուեց տանուտէր Խուզօն ճշմարտախօս մարդի վերաց և ձեռքի թբլիի կակուղ ճիպոտն այնպէս անզգուշաբար վրաց բերեց նորա կրծքին կախած ոսկի մեղալին, որ ճիպոտի ծայրը երեսախսառն դիպաւ աչքի աղբիւրականը և արիւնը շոռաց ինչպէս շաղրուանի խողովակից։

— Այ մարդիկ, վկաց կացէք, դարձաւ վիրաւորը դէպի խանութի առաջին ժողոված հասարակութիւնը. Մելիք-Բաղալն օր ծերութեան՝ ոսկի մեղալը դօշին՝ հարամկերի աման լպատող Խուզօցի ձեռքով ծեծ կերաւ. փոշիմանողի (Կղջացրող) մէրը տղաց բերի։

— Զեռիցդ եկածը չը խնացե՛ս, հեռացող Մելիքի քամակից ճիպօտը ճօճեց տանուտէր Խուզօն և Գոմշակերենց Պէտօցի դուքանը փէչատեց։

Յաճախորդը Մելիք-Բաղալն էր։

Ժամանակակից աշխատանքներ

ԳԻՒՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

Երեկոյ է. տանուտէր Խուզօցի վերնացարկումը բոլորակ բարձին թիկնած է մեծ տախտի երկայնութեամբ մի կարճահասակ, թիսադէմ և շիլ պարոն. նա օտարական հիւր է։ Անձանօթի հագուստը մի խառնուրդ է հին և նոր տարագի. գաւառական քաղաքի թերուս եւրոպական դերձակի կարած սև սերթուկի տակին երեսում է հայաստանցի նորահարսի պտղունցով բամբակած կինամոնագոյն արխալուղը. նորա զլիսին դրած ռուս մուժիկի մահուղեաց գոտիկին հակասում են տախտի առաջին դրուած սև սեկի կօշիկներն ու ոտքերի խորասանու նշանկար գուլպէքը. նորա մէջքը պնդող արծաթապատ փոկէ գոտին անհամերաշխ է կապտագոյն կիսազինուորական անդրավարտիկին. մի խօսքով՝ պարոնի մէջ ակնյացտնի նկատուում էր համեստ արհեստաւորի շլջանից տեղական աղաների, կամ ծառալոյների գասակարգին հասնելու զդալի ձգտումն։

Օտարականը միայն չէր. նա երբեմն երբեմն զլիսի ծանր շարժումներով, կամ բացասական նշաններով իւր հաւանութիւնը, կամ

տհաճութիւնն էր արտայալում իւր ոտքերի մօտ տախտին նստած խօսակցին:

—Այս բովէին, ասաց հիւրը և վեր կացաւ, մօտեցաւ սենեկի միւս անկիւնումը դրած ճանապարհորդական խուրջին կոչուած պայտւակին և հանեց նորա միջից մի կապոց:

Հիմա նա անծանօթ անձնաւորութիւն չէ. իւր կաղ ոտքն իրեն մատնեց, նա հանրահռչակ փաստաբան Զոլախ Յարութիւն գիւղական ադվակատն է:

Պարոն Յարութիւնն իւր կապոցով եկաւ նստեց տեղը, քակեց փաթեթը և տախտի վերաց փռեց նորա միջի առարկացքը, որ ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մի քանի թերթ հասարակ թուղթ, մի երկու կարած զործնական մատեաններ և մի հաստ ու կարճ գոյնզդոցն շերտաւոր կազմած գիրք:

—Սա՛ կը խօսի, սա՛, տանուտէր Խուղո՛, ինքնապարծութեամբ երեք անգամ ձեռքով զարկեց փակած գրքին Զոլախ Յարութիւնը և բաց արաւ գիրքը. տեսնենք դեռ ի՞նչ է ասում զակօնը՝ մեղալաւորին ծեծելու համար՝ յետոյ մեր չանգալները քցենք չորս կողմից:

—Բաց ասեմ, ոչ ամաչեմ, պարոն Յարութիւն, ծեծել եմ, սուտ չի, հէնց տուի ծիպոսով, որ ծծի վրայ կախ ընկած ոսկի մեղալի զնդոցը քո Մելիք Բաղալի կնկայ ականջը հասաւ՝ զլուխը խըմորի թունդիրը կոխած ժամանակ, աչքի արինը օխտը գազ շկրկի էր տալիս, ափսո՛ս, որ միանգա իրց պիպիկը չը պլիսաց (չը պարտասուեց), որ լուսաւորուէր (իռարանալ), վերջանար, չը թագցրեց տանուտէր Խուղօն:

—Ճա ճրատ! դժուար է, զակօնը շատ ստրօգի է, (խեռ է), ծանր ծանր գլուխը շարժեց փաստաբանը: Բայց այնումեղ մի՛ քցիլ, տանուտէր, ես ողջ լինեմ քեզ համար. հինգ այնչափ էլ ծեծած լինէիր, կը մարսէիր, էնքան լինի՛ էս գիւղից լոնդի Բարանովի ոտը կորես, իմ կլինենոներս (ծփերո) նրա ճանդը չը քցես:

—Էտ ի՛մ շնքին, էնագէս ոտը կորեմ ես գեղիցը, որ շուաքը չ'երևայ. էն վախտը քանի կարաս՝ ծոցդ տողացրու թուղթ փողի ծալքերով. ա՛յ, հէնց հիմի որտեղ որ ա, մի դմպոճիկ կարմրախէտ ձուկը թուղ կ'ընկնի: Հոգս մի՛ անի, դու քանի կուզես՝ հուպ տո՛ւր, նրա խօսքերից սիրտ չը պակսի, տեղը կայ. ինչքան փող պէտք

գայ՝ մեր բալասան աղի քիսէն սաղ ընի, մի թղթի կտոր ա, կը դրիլ տանք ու փողերը քո ջերը կը լցնենք:

—Սողոմն էս տեղ ա, ներս մտաւ և յայտնեց դզիրը:

—Կանչի՛ր, հրամացեց տանուտէրը:

Զոլախ Յարութիւնը շտապեց կրկնել բարձի վերայ և յօնքերը ժողոված՝ քիթը կախած և աչքի բիրերը սեղմած՝ առաստաղին նայել. կարծես խորիմաստ փիլխոփայութիւնով ուզում էր տան թանձր ծածկի միջով թափանցել երկնից համատեղութեան գաղտնիքը զննելու. նա արժան անդամ չը համարեց գէ՛թ մի ակնարկ ձգել ներս մտնող գիւղացի երիտասարդի խոնարհ երկրպագութեանը. նա, ինչպէս ասում են, վերացել էր և իւր ոտքի տակը չէր տեսնում:

—Արա՛, փուշ կենդանի Սողո՛մ, ցածր և ակնածական ձայնով ու հնչումով ասաց ներս եկողին տանուտէրը, էղի՞ն հալի (Երութեամբ) ես տուն գալիս մի պատուաւոր աղայ մարդի առաջ, կարծես թթի զշերին (Ետշան) վախացնելու համար թթենոնց վրայ դրած հին շորերից ճշքան վրայ հազցրած ուշուղ ընիս. չես կարում մի քիչ շնորհքով, շէնքով հագնուի՞լ:

—Գլխի՛դ մեռնիմ, տանուտէ՛ր, քեզ յայտնի չի՞ իմ աֆալը (Երութեան). Հէնց կարողացանք պստիկներին չուչիկ ու փուփու (հագուստ և էրակուար) հասցնիլ, որ մեր գլխի հոգսն էլ քաշե՞նք:

—Ըսչի՞, գեռ եկամուտդ չես ծախս՞լ:

—Ի՞նչքան մասիլ (Էեք) ունիմ ինձ, որ ի՞նչ փուշ հանի իմ մատիցը. ջհանդամի էն գլխին կորած երկու տախտակ բաղ ունինք, որ գեռ հաւողը ջուր չընկած՝ չը չալած (Աերակոս Անել), որը ծըտերն են կտցահարում, որը թուրք ու շուն ա տանում. մի կալատեղի չափ հող ունինք՝ էնքան չի բերում, որ եկող տարուաց սերմացու վեր ունինք, դառը քրտնքով, ատամներս հօւպ տալով մի տեսակ ծէրը ծէրին անջախ ենք հասցնում, էլ ո՞րտեղից հագուստի քամակիցն ընկնիմ:

—Նիմի որ ես քեզ հարստացնեմ, էս գիւղի առաջաւոր մարդկանց շարքումը կարգին համփայ շինեմ, ինձ ի՞նչ ես տալիս, ձեռս պաշո՞ւմ ես:

—Զեռդ չի՛ ոտդ էլ կը լիզեմ. բայց դու հօ՛ Աստուած չե՞ս,

որ բռնով հողը վերցնես, ոսկի շինես, գողս լցնես. մեր ճակատին ըսէնց ա զրուած՝ էսպէս էլ պէտք ա ըլնենք:

—Հանաք չեմ անում, քո արել, Սողոմ; մեղքս զալիս ես, ես ուզում եմ քեզ ձեռիս տակն առնեմ. ասում ա՝ «մի առուով որ մի ժամանակ ջուր ա գնացել, էլի կերթայ». քո լիսահոգի հերդ էս գեղի մներից մինն էր, առաջին համփէն էր. բայց քեզ պարտական են քո մօտ բարեկամներդ, որ դու որբ մնացիր, նրանք քեզ զրկեցին ու ահագին կարողութիւնը փորերը քաշեցին:

—Էլածն էլել, անց ա կացել, տանուտէ՛ր, էլ հին դարմանը քամու տախն ի՞նչ կ'անենք:

—Էս կ'անենք, որ ես կ'ընկնեմ էս փիլիսոփիայ աղայ մարդի ոտները, (տանուտէրն աչքով ցոյց տուեց Զոլախ Յարութիւնին) կը խնդրեմ, կը պաղատեմ, ձեռդ սրա փէշը կը տամ, Պետրոսենց Գալօցի աժդհայ (ահագէն) բաղը, որ վէր ա կոխել ու տում, յետ խլիլ կը տամ ու իր տիրոննջը կ'արժանացնեմ:

—Ի՞նչ ես հրամանք անում, տանուտէ՛ր, երկնքիցը կէծակ (էտյծակ) կը տրաքի զլիխս. Գալ-ափոնի դառը քրտինքն ինձ ո՞վ հալալ կանի: Էս օրուայ պէս միտս ա զալիս, ես տասը-տամնումէկ տարեկան հօտաղ երեխայ էի, որ ողորմածիկ քեռիս հօրս պարտքի տեղակ ծախեց. դեռ նոր երկու տարին տնկած բաղ էր, թփերն էլ հետը պոկէիր՝ մի քթոց հաւող չէր հաւաքուիլ: Խեղճ Գալ-ափուն ջանը քանդեց, բէջարեց (Տշակել), բաղ հասցրեց, որ ես էս օր գնամ նրա հասած տղամարդ մլքի զլիխն ցցուեմ, թէ մի ժամանակ մերն ա էլե՞լ. Աստուած մի՛ արասցէ, իր մօր կաթի պէս իրան անուշ ըլնի:

—Աղա՛, շաշ հայվարա՛յ (Պէտչա), օրէնքն ա հասցնում, դու հօ զոռով չե՞ս խլում, քո հերենական կայանքն ես յետ առնում, հօ ուրիշի մլքին չե՞ս տէր կամնդնում:

—Զէ՛, տանուտէր ջա՞ն, իմ խելքս ջուր չի խմում էդ տեսակ օրէնքից. ոնց որ տեսնում եմ, դու ուրիշ հրամանք ունիս անելու, պտի ասես, հիմի հանաք ես անում հետու, կամ իշխ տեղ ես դնում. բայց չէ՞ որ մենք էլ հացակեր ենք:

—Զէ՛, իմ որդոնց ա՛րել, ո՛չ հանաք կայ խօսքերումն, ո՛չ չանաք (չըհանաք). թէ չես աւատում, թո՛ղ աղայ Յարութիւնը զլիխումդ

մի մին հալի, հասկացնի. փառք Ասոծու, ինքն ա Երևանաց հողի (Կահանգի) առաջին զակօնադէտ (օբէնոգէտ) արվակառը՝ Վերջին խօսքերը Խուզօն բարձրաձայն շեշտում էր:

Չոլախ Յարութիւնն առանց գծաղրութիւնը փոխելու, մի հայեցք ձգեց Սողոմի երեխին, մի արհամարհական ժայխտ խաղացրեց շրթունքի վերայ և աչքի կոպով ոտից զլուխ դիտում էր իւր դիմացը կանգնած մոլորուած մարդանման կենդանոյն:

— Աղա՛ց Յարութիւն, սկսեց Խուզօն, սա իմ ասած տղէն ա, ինքը շատ պատուական հողի (անչն) ա, երեք տարի ա՝ պսակուած ա, երեք երեխայ ունի, իր հօր ապրանքն ուրիշներն վէր են կոխել, ուտում ու իր քորփէքը (յանշտանդ) թունդիրն ածես, էրես՝ շորահու չի գալ: Ես սրան խորհուրդ եմ տալիս, քո փէշը բռնիլ, մի քանի ամսից իր հօր մլքին տիրանալ. սա հէնց կարծում ա, թէ իրա վրայ ծիծաղում եմ, խնդրեմ, սա խեղճ գեղըցի անդէտների մինն ա, հրամանքդ սրան զլիսի քցես բանի էութիւնը:

Փիլիսոփայ փաստաբանն ինքնագոհ ժայխտով սկսեց մատները խաղացնել առաջին ընկած շերտաւոր օրինադրքի կազմի վերայ և հետեւալ պատասխանը տուեց.

— Կերեկ մեր եղբայրը մի պրօստօյ մուժիկ (կտոռքակ առանձիկ) է, զակոնի ստատիէքանցից (օբէնոգի յօդուածներից) տեղեկութիւն չունի, ապա թէ ոչ՝ խելօք մարդն իր դախօդից (օգտից) չէր փախչիլ. զակոնն ինքն է պաշտամանում որբերին ու նեսովերշենօլէտնիքանցը (անշափահան): Ես, ի հարկէ, կարիք չ'ունիմ զլսացաւանքի մէջ մտնել, ժամանակս էլ չի ներում էդպէս պուստօյ (չնչն) գործերը վերցնել, զիշեր ցերեկ պարապած եմ, զիշերները պրօշէն ինքըն ու զաեավլենիքն (խորհեր և զէկուցումն) եմ պատրաստում, ցերեկը սդերումն եմ զաշէի շշատ անում (դադարանուերանձն պաշտպանել). բայց որ ինքդ, տաննուտէր Խուզավերդիկ, ինձանից սովէտ (խորհուրդ) ես հարցնում՝ կասեմ; զիտեցողը չը զիտեցողին պարտական է. ես տեսնում եմ, որ դու բարեսիրտ տանուտէր ես, չես ուզում; որ քո ժողովրդի մէջ անիրաւութիւններ կատարուին: Լոփ' ուրեմն, եթէ ինչպէս ականջովս ընկաւ ձեր խօսելու ժամանակը՝ այս եղբայրը 10 տարեկան մանուկ է եղել, երբ քեռու ձեռքով սրա այդին ծախուել է, սա կարող է այժմ իւր հայրենական անշարժ

կալուածքը յետ ստանալ: Հարկաւոր է մետրիչ սկիզբ է տեղս տվո՞ (ծննդական վկայական) ձեռք բերել. դժուար չի, կոնսիստորի չլէն-ներին (անդամ) կամ սեկրետարին (տրենատպիկ) մի քանի շահի, կամ մի գլուխ շաքար ուտացրիր, 30 տարեկանը տասը կը շինեն: Երբ որ այդ վկացականը ձեռքիդ ունեցար, կայքիդ էլ կը տիրանաս, ծախուած օրից մինչև այս օրուացդ ախօդին (Եկամութ) էլ հետը. թէ որ չ'անեմ, աջ ձեռս կը կտրեմ, սդի մէջ տեղը՝ չլէնների՝ (անդամ) առաջին դէն կը ձգեմ ու դուս կը դամ, որ իմ ոսս սդի դռնովը միւս անդամ ներս չը մտնի:

—Եդ ասա՛ է՛, աղայ Յարութի՛ն, մի լաւ հասկացրո՛ւ էս անպող անասունին, արի՛ ու սրա պէսներին լաւութիւն ցանկացի. ծամում ես, բերաններն ես դնում՝ չեն ուղում կուլ տալ, կամենում են՝ որ մատով ներքեւ խցիենք, արդարացաւ տանուտէրը:

—Այ ձեր գլխին մեռնեմ, ուսերը վեր քաշեց Սողոմը, ախա՛ր մին, որ մեր բաղը հօրս պարաքի տեղակա ծախուել, մէկ էլ՝ որ նաշար Գալ-ափուն իր մատների միսը կերել ա, ընչանք հասցել ա. Էդ ո՞ր զակօնը կարայ հալալ աշխատանքին խէժ աչքով մտիկ տալ:

—Այդ՝ բոլորը ոչի՛նչ, սիրելի եղբայր Սողովմօն, նախ՝ այդ պարոն Գալուատը զակօնի ստատիայի դէմէ զնացել՝ մեղաւոր է. նորան ասած էր, որ իրաւունք չ'ունի նեսովերշենոլէտնի մանուկի ապրանքին մօտ գնալու, ի՞նչ ասնովանիա (հիմունի) ունէր չը լսելու, և երկրորդ՝ որէնա քո այգու դախօդն է կերել. ուրեմն դու իրաւունք ունիս առանց մեծ փող մսիելու՝ կայքին տիրանալ:

—Գալ-ափուն օրէնքն ի՞նչ էր հասկանում:

—Է՛... սիրելի՛ս, ամեն մի թագաւորի հպատակ պարտական է օրէնքը գիտենալ, դու այդ խօսքով մեղանչեցիր, մէկ անդամ բերանիցդ հանեցիր, միւս անդամ՝ զուրս չը թողնես ուրիշի մօտ, թէ չէ փորձանքի մէջ կ'ընկնես. քեզ խղճում եմ, մեր տանուտէրի բարեկամն ես, թէ չէ իսկոյն պրօտօկօլ կը կազմի և դու կը կորչէիր:

—Բաշխի՛ր, աղայ Յարութի՛ն, չը լսելու դի՛ր, պրուխը քարը տուեց, միջնորդեց տանուտէրը և դարձաւ Սողոմին—տօ աւանա՛կ, իշխ քուռա՛կ, դու թագաւորի արդվակատի մօտ թագաւորի օրէնքին չես հաւանում. հիմի վեր կենա՞մ կաշի-մաշիդ պլոկեմ:

— Բաշխի՛, աղայ ջա՞ն, ես մեղաց Աստծու, վիզը թեքեց Սո-
ղոմը:

— Ացդ ոչի՞նչ, ես անցիշաչար հայ մարդ եմ, դու այժմ կարճ
կապիր, եթէ չես ցանկանում քո սեպհական այգիդ յետ ստանալ,
քո կամքդ է, գնա՛, իսկ եթէ յօժար ես, կարող ես մի քանի մար-
կաց (բըռշնանիշ) առնելով՝ իմ ձեռքովս կարճ միջոցից մի պատուա-
կան ազդու տէր դառնալ:

Տղան ծործորակը քերեց, նա մոտածմանց մէջ ընկաւ՝ աչքերն
աննպատակ յառելով յիմար ոչխարի նման:

— Դէ ի՞նչ ես կմկմում, գե ադա'ց (պղաց), մօրքրօղլի՛ (հօրտես-
որդի՛), աղայ Յարութիւնին պազէրնի (Երաշխառութ) շինում
ես, որ քեզ ձեռաց էս գեղի համփէքանց շարքումը խառնի.
թէ չէ ասեմ ախտը (արջանագրութիւն) գրի, ընչանք Սիրիր մին քշի,
կիսահեգնօրէն, կիսասպառնալից հարցրեց տանուտէրը Սողոմին:

— Քո կամքն ա:

— Դէ արի՛, բալա՛մ (պատեկա), արի՛ աղայ Յարութիւնի ոտք
պաշի, հարցրու՝ ի՞նչքան մարկի փող կը հարկաւորի, գնա՛ բեր,
թո՛ղ էգուց էս մարդն երեսին խաչ հանի ու գործիդ ձեռք տայ:

— Առ այժմ դեռ 20 մանէթից աւել պէտք չ'ունինք, հար-
կաւոր է առաջ միրովոյ սդումը (Կաշպարսպ առքեան) պօշլին
(հաքս) տամ; թղթի փող տամ; յետոյ երբ որ գործն օկրուժն օց
սուդը (հականգական դատարան) կը մտնի, այնտեղ էլ մի չնչին բա-
նով գլուխ կը բերենք, ապահովացրեց փաստաբանը:

Սողոմը նորից գլուխը քերեց և վախվախելով՝ տանուտէրի աչ-
քերին նայեց:

— Հասկացայ, գլուխը շարժեց տանուտէրը, մեր Սողոմը պատ-
րաստ փող չ'ունի: Վնաս չ'ունի, որդի՛, սիրա տուեց նա, առաւօ-
տը Տաճառ վարժապետին 40 մանէթի մի վէքսիլ (հոռհակէ) գրել
տո՛ւր մեր Բալասան աղի անումով, զաւէրնի անիլ տուր, բեր փէ-
շատը գնենք, ես աղայ Յարութիւնին եօլա կը տանեմ, մնացածն
էլ գործիդ համար կը հարկաւորի, թո՛ղ ինձ մօտ մնայ, ուտեմ էլ
կորած տեղ չի, մի օր քեզ պէտք կը գամ:

Մի քանի անգամ էլ ծռմռատուեց Սողոմը, փէշերքն ուղղեց,
թեքով քիթը սրբեց, աշ նայեց, ձախ նայեց, թակարդում բռնը-

ւած աղուէսի նման ոտքի մէկն յառաջ դրեց, միւսը յետ, վերջը մի հազար ու համաձայնեց տանուտէրի առաջարկութեանը՝ խոստացաւ միւս օրը գնալ աղայ Յարութիւնի հետ Հաշտարար-նօտարի մօտնրան երաշ-խաւորական տալու՝ Գալուտ Պետրոսեանցից իւր հայրենական ալ-դին յետ պահանջելու մասին:

Բայց, քար ընկնի՛ Սողոմի գլխին, տանուտէրի տանից դուրս ե-կաւ և ուղղակի Գալ-ափունի դուռը բաղխեց, ամեն ինչ մանրա-մասնօրէն նորան յայտնեց:

—Խիղճս տանջում է, ասում է, չեմ կարող թագցնել, գազան-ների ճանգն եմ ընկել, ձեռներից չեմ կարող ազատուիլ, հաւատաց-նում էր, բայց դու, Գալ-ափո՛ւ, ինչ գիտես՝ էն արա՛:

—Ի՞նչ անեմ, մտածեց Գալօն Սողոմի գնալուց յետոց և տրեխ-ները հագաւ, շտապեց Մելիք-Բաղալենց տունը:

Այս անդամ Գալօյի գործը լաւ յաջողեց:

Մելիք-Բաղալյն հիւր էր գաւառական միւս փաստաբանը— Զոլախ Յարութիւնի ախոյեան լօնդի Պողոս Բարանովը:

Նրան հրաւիրել էր ինքը Մելիքը՝ իւր ծեծուելու վրէժը պա-հանջելու տանուտէրից:

Նորա առաջին էլ թափուած էին նոյն օրինագիրքը, նոյն թըղ-թերն ու գործերն, ի՞նչ տեսանք Զոլախ Յարութիւնի մօտ:

Արդէն Մելիքի բողոքագիրը պատրաստ էր, որ Գալ-ափուն մտաւ և ամեն բան մի ըստ միոջէ յայտնեց:

—Ես էդ քո չոլախ շանն էն օրը քցեմ, էնպէ՛ս փախցնեմ ոգիցը, որ մկան ծակը հարիւր թումանով առնի. Էդ քո Սողոմո-նիդ էլ տկորացնեմ, վերջին շապիկը թողնեմ, սուդէքնի ի զ-դեր ժէկ քն' էլ (դրապարանական ծակները) վզին բարձեմ և չը թոյլ տամ պարոն Գալուտի այդու մօտովն անցնելու. այս րոպէին տասնից աւել այդպիսի գործեր ունիմ այդ անպիտան չոլախի դէմ, ի պարծե-ցաւ Բարանովը:

—Ընդուր են ասել՝ փէշաքեարը (արհեստառք) փէշաքեարին թշնամի ա, նկատեց Մելիք-Բաղալը: Լիսը որ բացուեց, ձի կը նստենք, պարոն Պողոսի հետ կերթանը սրան պավէրնի կը շինենք, ինչ ծախս էլ կը հասնի՝ կը տանք, կարգադրեց ինքը Մելիքն և Գալօյին ճանապարհ դրեց:

— Եղբա՛ց սիրելի, քսան անդամ այդ անպիտանին առաջարկել եմ, որ ազնիւ խօսք տանք միմեանց, ուէ զդի (Գաւառաւ) բոլոր գիւղերը վիճակ ձգենք մեր մէջ, ես նորա բաժինը ոտք չը դնեմ, նա իմը. բայց չի լսում, որ գիւղը գնում եմ, լսում եմ, որ եկել է խառնշտորել, չեղած տեղից իսկեր (Պահանջ) ստեղծել ու վերցրել:

— Դէ՛, էդ հօ քո՛ օգուտն ա, մէկդ գործ սկսողի կողմից կը լիք պավէրնի, մէկէղ՝ դիմացի մարդի՝ ինչպէս որ մեր Գալօյի դործումը, եթէ չոլախ Յարութիւնը Սոկոսին չը համոզէր, դու նորանից շահմունք կունենացի՞ր, հարցրեց Մելիքը:

— Աւելի օգտակար չէ՛ր լինիլ, եթէ գործն էլ ստեղծէինք, երկու կողմիցն էլ առանցնք:

— Յետոյ ի՞նչպէս էիր վերջացնում, ո՞ւմ օգտին:

— Վերջ ի վերջոյ օգուտը մերը կը լինէր, իսկ գործի տէրերը կամ կը հաշտուէին, կամ միանդաման կը քանդուէին՝ այնպէս յետ կը կանգնէին:

— Զեր այդ աղվակասութիւնն ու տէրտէրութիւնը մին ա, ընչացքի տակից ժպապալով ասաց Մելիք-Բաղալը, մեռելիցն էլ էք առնում, կինդանուցն էլ:

— Պարոն Պօղո՞ս, ասաց միւս օրը Մելիք-Բաղալը, էս օր իմ ու Գալօյի քեզ ընկերանալը յետ մնաց, խիստ հարկաւոր գործ ա պատահել. դու հրամանքդ գնա՛, մենք մի երկ' օրից կը դանք քեզ մօտ, թղթերը շինել կը տանք:

— Զեր խաբերայ հէ՛րն անիծած, ձեռքը թափ տուեց Մելիք-Բաղալը Բարանովի քամակից. սատկած իշան էք գտել, նաևները քաշել էք, խեղճ գեղրցնաց արիւնն էք ծծել. թէ չեմ մեռնիլ, երկուսիդ ոտն էլ էս մհամիցը կը կտրեմ ու էնպէս աղվակատների կերթամ, որ գործս շինեն, ոչ թէ ինձ աղքատացնեն:

Ի.

Խ Ո Փ Ը Ք Ա Ր Ի Ն Ա Ռ Ա Ւ

Ամեն տան ճրագները հանգել են. Օ. գիւղի վողոցներում. ոտքը խաղաղուել է. պատաւները մի հանգ քնել են ու զարթնել, դուրս գնացել, իրանց հովին տուել ու տուն մտել: Այդ միջոցումը

մի տան վերնայարկի պատշգամբի վրայ մի եավնջում կողոլուած մարդ մօտենում է լուսամտին և յետ քաշուում: Պատշգամբը երկու դուռն ունի, նոյսանից մէկը տանում է տան մեծ սենեակը, միւսը՝ նոյն սենեկի հետ ներսի դռնով կապ ունեցող կանանց բաժինը, ուր միաժամանակ կերակուր եփելու փոքր թոնիրն է ասրբած: Նարժումներից երևում էր, որ գիշերաշրջիկն այս տան համար օտար էր, նա սովորական դռնովը չէր բարձրացել պատշգամբը, նա ուղղակի փողոցից պատովն էր վեր ելել:

Ահա կանանց և սենեկի դռւուը բացուեց, մի նորահաս աղջիկ դուրս եկաւ, քարշեց եախնջին ու երկուսը միասին մօտեցան պատին:

Պատշգամբի պատի տակին մի ծառի մեծ կոճղ տարիներով ընկած է և նստարանի տեղ է պէտք գալիս:

Այս տեսակցութիւնն առաջինը չէր երկու ժամադիրների մէջ:

Այն օրից, երբ 0. գիւղացիք աշնան բերքը ժողոված՝ տուն հաւաքուեցան, կոճղի պաշտօնը մեծացաւ. այս տարի գիշերն էլ անշոնչ փայտի կտորը չը հանդստացաւ. խաղաղութիւնը տիրելուն պէս՝ այդ երկու հոդին մինը կանացի սենեակից էր դուրս գալիս, միւսը պատիցն էր վեր բարձրանում և կոճղի վերայ նստած՝ փսփըսցի մէջ էին մտնում:

Աքաղաղն առաջին անգամը թևել թափ էր տալիս և դեռ նոքա նստած էին լինում: Խնչպէս երեւում էր, սենեկի մէջ քնած երկու ուրիշ անդամներից մէկին անցաց չէր անքուն պւերի (ռեւերի) այս արարքը: Սակաւ չէր պատահիլ, որ մի միջահասակ կին զգուշութեամբ բաց կանէր կանացի սենեկի դուռը, զլուխը կը հանէր, իսկ մարմնով ներսը կը մնար, որպէս զի իւր շապկանց լինելը չը նկատուի և ներս կը կանչէր կոճղի վրայ նստողներից մէկին, իսկ մէկլին քաղցր յանդիմանութեամբ խորհուրդ կը տար բաւականանալ և գնալ քը ներու:

—Հէնց հիմի գնում եմ, հէնց հիմի գալիս եմ. լսում էր միամիտ կինը երկուսից միասին և մի կնճիռով իւր տհաճութիւնը յայտնում ու գնում անկողին մտնում: Խառն երազները չէին թողնում մտատանջ կնոջը երկար քնել. էլի շուտով զարթնում էր, ձեռքով շօշափում իւր աջ կողմի դատարկ անկողինը, ճրապով վեր կենում, նոր խոստումն առնում իրեն դիւաղադար անողներից և նորից պառկում:

Երկու նստողները մեր լաւ բարեկամներն են. Սամփառն ու Սօնան էին նոքա:

Այն օրից, որ Գալ-ափուն ու Բարսեղն այդու ծառի տակին արեւելեան խնդիրը վերջացրին, Բարսեղը թեթև աշքով էր նայել և չէր բարկացել երեկոները շատ ուշ երբեմնապէս Սամփառնին իւր պատշգամբումը տեսնելուս:

—Աղա՛, զեռ ջուրը չը հասած ոտքերդ հանեցի՞ր, նկատողութիւն արեց առաջին երեկոյին Բարսեղը Սամփառնին. բայց երբ ամաչկոտ փեսացուն կարմրեց ու դլուխը քարշ ձգեց, Բարսեղն իւր մի նկատողութեամբ ամենայն փակ դրուը բաց արեց:

—Դու մեղաւոր չես, որդի՛, աշխարհքնա ջուռ անցել, փշացել, մեր ժամանակը պտէիր, որ աթարոցով հետ ածէի, փեսէն աներանց շէմքից քթեթի (Նորահարսին հառցնելու շրիելը) հետ պէտք է տուն մննէր. բայց հիմի ամեն ինչ փոխուել ա, տեսնում ես՝ նշան էլ չես դրած, մի դարդակ խօսք ենք տուել, արևի շողքի պէս՝ պուպուզ՝ տուն ես ընկել. մնաս չունի, ջահէլ էք, քէֆ քաշեցէք, հիմիկուաց սէրը քաղցր կը լինի:

—Քիչ մնաց՝ մկան ծակը հարիւր թումանով էր առնում, երբ ոտիդ շիլթուն (չայն) առաւ, ուզում էր գող կատուի պէս փանջարովն իրան վէր քցի, համա էլ ո՛րտեղ, դուռը բաց արիր, հոգէառի պէս գլխավիրելը ցցուեցիր, մեր լեզին էլ ջուր շինեցիր, շողոքորթեց կինը մարդին:

—Բաս էդ անդգամ Սօնին չե՞ս ասում, որ քունչն ա մտել պանրագող մկան նման գլուխը կախ քցել, աչքերը պլզացրել, սաքի թէ շատ ամանչում ա. դէ՛, շան աղջի՛կ, հրէ՛ս, ա՛ռ ոտներն աչքդ կոխի, ոսով գլխով քեզ բաշխեցի, կիսակատակ տալով բռնեց Բարսեղը Սամփառնի կուռն և հրեց դէպի աղջիկը:

—Գնա՛, Սամփառն, գնա՛ անօրդ ձեռը պաչի, որ քեզ իշին (իրաւունեց) ա տալիս մի մին գալ-գնալ. ես զմիշ չէի անում սիրտդ կոտրել, բայց հէնց որ երեւացիր՝ մահուան գող տուի, մտքումս ասում էի. հիմի Սօնի հէրը տուն կը գայ, քեզ քարհալած՝ ինձ ու Սօնիս էլ սալջարդ կանի, բայց լաւ սհաթի ուստ եկար (հանգեղեցար), բաղդդ կտրուկ ա:

Ուղիղ էր Մարգարտի ասածը. եթէ Բարսեղն էս ըուպէին Սամփ-

առնենց սեղանի վրիցը չի վերկացած լինէր, եթէ նա Գալա-
փունի հետ երկարակոթ դրումը՝ ջան ասելով՝ վայելած չը լի-
նէր, էսպէս թեթև չէր անցկենալ փեսացուի առաջին հանդի-
պումը:

Սատանայ էր Սամփառնը. հէնց որ նկատեց, թէ հօր ու անե-
րոջ քէֆը տեղն եկաւ՝ ինքը դւնի դուրս՝ ու կատուի նման վեր շու-
լալուեց (բարձրացած) նշանածենց պատիցը:

—Դէ գնացէ՛ք գեազմի վրայ (ՊԹՎՀԳԹՄԲ) մի քիչ ասուլիս արէք,
թող հէրդ թէք լնկնի, քնի, ձեռքով դուռը ցոյց տուեց Մարդա-
րիտ փեսացուին ու աղջկանը:

Այդ օրից Սամփառի համար Սօնենց տունը ջրի ճանապարհ էր
դարձել, նորա ոտքը բացուել էր:

Այդ օրից Սամփառն իւր լնկերների համար ուրբաթախօս չէր,
կատակներն ամենքից վաղ ինքն էր սկսում, պատմում էր, որ նշա-
նածի մօտիցն է գալիս, որ զոքանչի ձուաձեղը սիրտը բռնելէ և այլն։
Այդպիսի միջոցները միշտ ցիշում էին իւրեանց լնկեր թշնամու գլո-
ւակին զոհ գնացած խեղճ Դօնդարենց Ասօլին, հայհոյում էին, ուխ-
տում էին վրէժիսնդիր լինել նրան սպանող Դվակոթենց Հայրօլից, որ
շատ ժամանակ չէր հալասան աղի երաշխաւորութեամբ արձակուել
էր բանտից։

Բայց ահա մի քանի օր է, որ Սամփառնը ոչ ցորեկն է զիւլա-
միջին երևում և ոչ գիշերները լնկերական խմբակին է այցելում։
Զարաղէտ նշանի երեկոյից յետոյ էր այս։

Մի քանի անդամ Սամփառնի լնկերները բաղխեցին նրանց դուռը,
հօրը հարցրին, մօրից տեղեկութիւն խնդրեցին, բայց միշտ մի տե-
սակ անորոշ պատասխանով վերադարձան։

—Տղէ՛ք, մեր գլխինը լաշակ ա, թէ որ մեր լնկերի հաւարին վը
հասնենք (օգնել), մենք խօսք ենք տուել մեր զլուկը Սամփառնի ու-
ղուրին յետ դնել, պոօշտով էլ պայման ենք կապել, էս օր մեջ ամօթ-
ա, որ թողանք նրա թշնամիքն ուրախանան, մենք պտի խաշներիցս
դուռ գանք, նրանց տունը կրակողին գտնենք, շամփուրը քաշենք,
խորովենք ու ով որ էլ նրա սրտի մուրազն ուշում ա խափանել,
Սամփառնի նշանածին կամենում ատիրանալ, պոնենք, կամ խօսք
առնենք, որ յետ քաշուի, կամ թէ չէ շնչիցը մի սև զազիլ (Յաղէ-

ավետք ա կապենք, ձեռները կպրի մէջը հինա դնենք ու արել մէր մտցնենք:

Սամփսոնի ընկերները կատակ չէին անում. նրանք գուան տունը կրակ տուղներին. տանուտէր Խուզօյի տղայ Կարապետն իւր բերանով պարծեցել էր, որ ինքն է կրակ տուել Բալասան աղայի քրոջ որդի Վասակի հետ և թէ շատ չի քաշիլ ինքը Սօնալին էլ կը տիրանայ:

Սամփսոնի տրտմութեան պատճառն իսկապէս ոչ նշանի յետ մնան և ոչ հրդեհն էր:

Իւր աները միւս օրն իւր բերանովն էր հրամայել, որ սիրտը չը կոտրի, գայ ու գնայ, Սօնի հետ խօշ ու բէշ անի: Բարսեղը Գալ-ափունի հետ էլ խորհուրդ էր արել, որ մենծ տէրտէրի խօսքերը պարանի տեղ չը դնի, մի կերպով գիւղի միւս քահանայից համոզի, մէկի ծուխը դառնայ, նրանց ձեռովը մի իրիկուն նշանը տայ, մէկէլ օրը հարասնիքը նստացնի, պսակի, դուշմանին (Աշնամէ) տրաքացնի, իրաւորին ուրախացնի:

Եւ աշխատում էր Գալօն, և շարունակում էր իւր երեկոյեան այցելութիւնները Սամփսոնը. բայց շատ չ'անցաւ՝ հօր ու որդու ոտքը միանգամից քարին առաւ:

Գալօյի երեսին ամեն դրուը փակուեց, գիւղի երկու տէրտէրները կտրական կերպիւ մերժեցին նորա խնդիրը, պարզ ասացին, որ մէծ տէրտէրը երկու տարի իւրեանց երկուսի հետ էլ խոռով էր, խոռով էլ պաշտօն էր կտտարում, հետները չէր խօսում, իր լեզուովն է պատուիրել իրանց, որ չը համարձակին էդ նշանի գործի մէջ նառնուիլ, ապա թէ ոչ, սպառնացել էր՝ մէկին Սևանի խոնաւ իւր-

Դ մէջ փթացնել տալ, միւսին Խորվիրապի Լուսաւորչի վիրապի ցերէ՝ դռնապանն անել:

Մուտքի Դէ բանն էդ տեղն ընկաւ, Սամփսոն ջա՞ն, դէմ ու դէմ

Ելու մի երեկոյ Բարսեղը, էս օրուանից իմ տունը քեզ երեսին ասաց ւ, իմ աղջկայ անունն ես չեմ թողալ աշխարհ-համար պաս էլա. ու շաբաթ ձեզ ժամանակ, գնացէ՛ք, քարէքար քովը մին ըլնի. երկ մաղի գլուխը մի բան քցել (Յաջողեցնել), դիպէ՛ք, թէ կարացիք աածը, արի՛ դուրս քաշի տար, մօրդ կաէս քո տունը, էս քո նշան դուք ձ'զ համար, ես ինձ համար, թի պէս քեզ հալալ. թէ չէ դուք ձ'զ համար,

զոռով բան չի գլուխ դալ, ճակատներիդ ինչ գրած ա՝ էն պտի կատարուիր Ահա հէսց այս սառը պայմանն էր, որ Գալօփի տունը սգի մէջ էր զիել. հայրը մոլորուած՝ չը գիտէր ի՞նչ անէր, որդին երեք օր ցորեկը մթնասենեակից դուրս չէր գալիս, իսկ գիշերը Բարսեղենց պատի տակից չէր հեռանում; Խնչպէս ասում են՝ Սամփառնի խոփը քարին դէմ եղաւ:

— Ե՛հ, վճռեց մի երեկոց էլ Սամփառնը, ջուրն ընկնողն անձրեկից չի վախիլ, էս էլ մի կեանք չի, որ քաշում եմ. ասում ա՝ պղինձը վէր ընկաւ չը կոտրուեց, բայց ձէնը վեր էլաւ. աշխարհքին յայտնի ա, որ ես Բարսեղի փեսացուն եմ, հիմի ես թողամ՝ իմ նշանածը ուրիշի ճանգն ընկնի ու ապրիմ. թո՛ղ որտեղ բարակի՝ էնտեղ կտրուի:

Այս խօսքերով նա կապեց իւր երկայրի դաշոյնն ու քայլերն ուղղեց դէպի իւր սպորական պատի ճանապարհը:

— Ուրիշներն անծանօթ տեղից աղջիկ են դուս քաշում, փախցնում, իրանց մուրազին հասնում. իմ Խօնին մի խօսք ասեմ, հետեւ Հնդատան կերթայ. գնամ բերանիցը խօսք առնեմ, էգուց իրիզուն ձին նստեմ, թարքս քաշեմ, գործակալի առաջին հետը չոքեմ, պըսակուեմ ու օրով ցերեկով կուռը բռնած՝ գեղը մտնեմ, տեսնեմ ո՞վ չի ասիլ՝ բարաքեալա՛հ (Քեցցե՛ս):

— Կա՛ց, Սամփառն, մեռանք քեզ ման գալօվ, Բարսեղենց պատի տակին շրջապատեցին նրան երեք չորս հոգի:

Մեղաւոր չէր Սամփառնը, որ գլուխը երևակայութիւններով լիքը, միտքը օդի մէջ պտտելուս, նա առաջին անգամից չը ճանաչեց իւր ընկերների ձայնը և դաշոյնը պատենիցը հանեց ու կամենում էր իւր ճանապարհը կտրողների վերաց յարձակուել:

— Աղա՛, մենք ենք, Սամփառն, Խօնայիդ արեւը կը սիրես՝ գժութիւնդ յետ դի՛ր:

Սիրեկանի անունը նորա կռները թուլացրէն, նա ուշքի եկաւ և ճանաչեց իրեն շրջապատողներին:

Ընկերներն ամեն բան պարզեցին նրան, խոստացան իւրեանց աջակցութիւնը, պատրաստականութիւն յայտնեցին Բալասան աղայի դուռը կուպր քսել, տունը կրակել, տանուտէրի այգին արմատահան անել, նորա ախոյեան Կարապետին էն աշխարհքն ուղարկել. բայց Սամփառնը մերժեց բոլորը:

— Իմ խնդիրքս ձեղանից էս ա, իմ ազիզ աղպէրնե՛ր, ասաց նա, որ էս տանիցը դուք մի քանի օր հեռու ման գաք, պէտք ենած վախտը ես ձեզ կը կանչեմ:

Ընկերները հեռացան սրտները կոտրած. իսկ Սամփառը բարձրացաւ պատով և ոտքերի ծալրով մօտեցաւ լուսամուտին ու ներս նայեց:

Ոչինչ ձայն, ոչինչ շշուկ. ամենքը խաղաղ քնի մէջ են:

Բայց ահա ներսի մթուժեան մէջ՝ կրակ կոտրած պատանուն քաջ ծանօթ կէտից, ուր նորա աչքերն էին յառած, մի ստուեր պպիտակին տուեց:

Սամփառի օիրտը ժամացուցի ճօճանակի նման սկսեց ճկճկալ, նորա բերանն անդիտակցաբար յետ բացուեցաւ, ձեռքն ու ոտքը բարակ ծղօտի նման՝ ինչպէս մի խիստ քամուց՝ կանգնած տեղը դողդում էին. նա մլոււած մնացել է տեղը, նորա ուշքն էլ իրան չի զեկավարում; նորա աչքերը սեացան, մի րոպէ՝ և նա գետնովն է դիպչելու և աղմուկ բարձրացնելու:

Յիրաւի նա ընկաւ, բայց մի գրկի մէջ. նորա ընկնելու ձայնը չը վեր ելաւ:

Սառել էր Սամփառի անձը, ոակայն սկսեց տաքանալ, ջերմութիւնը սկիզբն առաւ ճակատիցը. այն ի՞նչ կրակ էր, որ ճակատի ուղիղ միջակէտից մի ակնթարթում տարածուեցաւ բոլոր ջղերի մէջ:

Այդ իւր նման քունը կտրուածի համբոյրն էր, որ դիւժական բալզամի ազդեցութիւնը դրծեց:

Այդ Սօնան ինքն էր. մի քանի գիշեր է մինչ հայրը ճանապարհ էր ցոյց տուել իւր ապադայ թագ ու պսակին՝ Սօնան անքուն սատանաց էր դառել, մտնում էր անկողին, գլուխը բարձի տակը կոխում ու հեկեկանքների մէջ խեղդուում, որ հայրը չը լսի իւր հառաչը, որ մայրը չը կշտամբի իւր յանդքնութիւնը:

Հայրն ուշք չէր դարձնում, բայց մօր սրտազգաց աչքերից չէր փախչում զաւակի երեսի թափիծը, նկատումէր իւր սիրելու զգալի կերպիւ փոփոխութիւնը, գունատութիւնը, խոր ընկած աչքերը և իւր վիշտն իւր սրտումն էր խեղդում, ոչ մարդին, ոչ Սօնային էր մի բան ասում. ամուսնուցը վախենում էր, իրեն խստիւ պատուիրած էր Սամփառին ներս չը թողնել, աղջկանն էլ խնայում էր:

Զգում էր Սօնալի սիրտը. նա անհամբեր սպասում էր ամեն երեկոյ, նա մինչև անզամ զարմանում էր, որ երեք գիշեր իր սրտի սիրելին կարողացել է համբերել ու պատը չը բարձրանալ:

Մի քանի անդամ՝ նա ծնողաց խոր քնի մէջ մտած ժամանակ դուրս էր գալիս պատշգամբը, աչքերն ուղղում էր իւրեանց հարեւան տան մթութեան մէջ նշմարուող լուսամտին, ժամերով կանգնում էր և նորից տուն մտնում:

Դիշերն այս գործողութիւնը անընդհատ կրկնուում էր: Հէնց այս բովէներից մէկն էր, երբ Սօնան չը թողեց վայր ընկնելիւր դրկի մէջ ապաստանարան գտած ուշագնացին:

— Ո՛չ, պատասխանեց աղջիկը Սամփանի վճռական քայլի դէմ, էղ ճամփէն ամեն սհամթ մեր առաջին ա, հօրդ ասա՝ թող էլի դէս ու դէն դիալչի, բալքի մի հնարքով պսակի հրաման բերի, թէ չէ որ բանն էղ տեղը հանի, հինգ օր առաջ՝ հինգ օր յետ, ես քոնն եմ՝ դու իմը, քեզանից սալվահի ուրիշներն իմ նաշս մենակ իրաւունք ունին էս տանիցը դուս տանելու:

— Իսա ես ո՞նց համբերեմ, անունիդ մատա'զ, երեք օր ա ես ոչ կենդան եմ՝ ոչ մեռած, մի օր որ քեզ չեմ դրկում, հէնց իմաս՝ մահն ա շմիքս փաթաթուում:

— Հո՛զ մահի գլխին, ո՞ւր եմ թողում, որ տեղս բռնի. ընշանք բանի գլուխ գալը՝ հօրն ու մօրս քնելուց յետոյ՝ քեզ կառնեմ, կը մտնեմ մեր գոմի օդէն ու վղիցց պոկ չեմ գալ՝ լնչանք աքլրի երեք բերան կանչելը. թէ որ մեր աքլրն էլ շուտ կը կանչի, կը խեղդեմ:

Ացրպէս էլ անում էին սիրահարները. հաւերը պատրաստուում էին թառից իջնել, որ Սամփանը հեռանում էր իր սիրելուց:

(Կը շարունակի)